

ՀԱՅԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԴՍՐԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ
1927-28 ԹՎԻ ԳՅՈՒՂԱՐԿԻ ՄԱՍԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ 1927 թ.

PH ✓
36789 ✓
✓

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՔԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

380.17:63

h


**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ
1927-28 ԹՎԻ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

A $\frac{1}{4378}$



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐՁԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ

1927թ.



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4473

ԳՐԱՌ. 239 Բ.

ՏԻՐԱԺ 3000

1927-28 ԹՎԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ

1927-28 թվի միասնական գյուղատնտեսական հարկը, խորհրդային կառավարութեան վորոշմամբ, կգանձվի համարյա այն ձևով, ինչպես 1926-27 թվին:

Յերբ 1926-27 թվին առաջին անգամ մտցվում էր գյուղատնտեսական հարկի ներկա սխեմը (ձևը), մենք առաջուց գիտեցինք, վոր հետագա տարվա համար կարիք կլինի՝ նրա մեջ փոքրիկ ուղղումներ, փոքրիկ փոփոխություններ մտցնել: Այս տարվա փորձը ցույց տվեց, վոր տնտեսութեան յեկամտաբերութեան համեմատ գյուղատնտեսական հարկ վորոշելու ձևը յուրաքանչյուր հարկատուի համար ամենահարմարն ու հասկանալին է:

Հարկն ըստ գյուղացիական տնտեսութեան յեկամտաբերութեան հաշվելը այն խոշոր առավելությունն ունի, վոր հնարավորություն է տալիս մեզ՝ իջեցնելու հարկը սակավունակ տնտեսություններին համար և բարձրացնելու հարկային ծանրությունը ավելի ունևորների համար:

Այս տարի հարկ վճարած, կամ յեկամտի չըհարկվող միևնույն (նվազագույն չափի) հիման վրա հարկից ազատված ամեն մի գյուղացի կարող

եր գործով համազվել, թե ինչ չափով 1926-27 թվին ընդունված գյուղատնտեսական հարկի նոր որենքը գյուղի չքավոր մասի համար արտոնության որենք էր:

Խորհրդային կառավարությունը 1927-28 թվի համար հարկի ծանրությունը չի ավելացրել: Անցյալ տարի կիրակվող հարկի կազարները (հիմնական չափերը) անփոփոխ մնում են նաև այս տարի: Յեվ դեռ ավելին՝ քիչ շնչատեր տնտեսությունների համար, այսինքն՝ մեկ, յերկու և յերեք շունչ ունեցող տնտեսությունների համար, արտոնություններն ավելացել են:

Այդպիսով, նախքան 1927-28 թվի միասնական գյուղատնտեսական հարկի նոր կանոնադրության մանրամասն քննությանն անցնելը, մենք հենց առաջուց կարող ենք ասել, թե այն փոքրիկ փոփոխությունները, վոր մտցված են որենքի մեջ, հրատարակված են հոգուտ գյուղացիության ե՛լ ավելի ուղիղ ու համաչափորեն հարկելուն, հրատարակված են հոգուտ մեր գյուղի չքավոր և սակավունակ մասի:

Այժմ անցնենք առաջիկա գյուղատնտեսական տարվա գյուղատնտեսական միասնական հարկի կանոնադրության քննությանը:

Ի՞նչ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ Ե ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ.

Մենք արդեն գիտենք, վոր Խորհրդային պետությունը շատ ծախսեր ունի՝ մեր Խորհրդային

սահմանների պաշտպանության, դպրոցական շինարարության, աստղապահության, հիվանդանոցների, դեղատների շինարարության վերաբերյալ և այլն: Սակայն խորհրդային պետությունն այս ծախսերը մեծ մասամբ ծածկում է ի հաշիվ յեկամտի այլ աղբյուրների, ծածկում է ի հաշիվ համապետական բյուջեյի: Բայի համապետական նշանակություն ունեցող ծախսերից, մենք ունենք նաև տեղական բնույթ կրող բավական ծախսեր, վորոնք ընկնում են տեղական բյուջեյի վրա: Բայց քանի վոր որենքով այս կամ այն ծախսերը տրվում են տեղերին, հետևապես, դրանք ծածկելու համար պետք է համապատասխան յեկամուտներ ել հատկացնել: Յեվ հենց՝ միասնական գյուղատնտեսական հարկից ստացված յեկամուտներն են, վոր գլխավորապես մտնում են տեղական իշխանությունների յեկամտի մեջ. այսինքն մնում են վորոտի (գայրայի-թեմի-գավառակի) յեկամուտների մեջ, գավառի յեկամուտների մեջ, և միասնական գյուղատնտեսական հարկի միայն վաքրիկ, տննչան մասն և մտում գանձարանի ընդհանուր յեկամտի մեջ:

Միասնական գյուղատնտեսական հարկի $\frac{2}{3}$ հատկացված է յուրաքանչյուր զաչնակից հանրապետության յեկամտին: Հարկի այդ $\frac{2}{3}$ -ը կամ $66\frac{2}{3}$ տոկոսը բաշխվում է հետևյալ ձևով. յուրաքանչյուր վորոտի (չրջանի) գանձված ամբողջ հարկի 40 տոկոսը, կամ $\frac{2}{5}$ մասը հաշվվում է այդ

վորոստի կամ, ինչպես ընդունված է անվանել Անդր-
կովկասում, ավյալ դայրայի-թեմի-դավառակի
բյուջեյի մեջ:

16²/₃ տակտը, այսինքն՝ յուրաքանչյուր դավա-
ռի հարկի ամբողջ գումարի ¹/₃ մասը մտնում է դա-
վառական բյուջեյի մեջ և կարող է ոգտագործվել՝
թե վորոստային բյուջեներն ուժեղացնելու (այն-
տեղ, վորտեղ թույլ են) և թե դավառական բնույթ
ունեցող այլ կարիքների համար:

Յեւ վերջապես, հարկի 10 տակտը, կամ ¹/₁₀
մասը մտնում է հանրապետության արամագրության
տակ ու դարձալի իր մեծ մասով գնում է ծածկե-
լու տեղական նշանակութուն ունեցող ծախսերը:

Այդպիսով, հարկի ուղիղ ու լրիվ ցուցակա-
դրումից և նրա լրիվ գանձումից են կախված, գլխա-
վորապես, տեղական այն ծախսերը, վոր ամենից
ավելի պետք են հենց իրեն՝ գյուղական ողջարնու-
կությանը:

Ո՞Վ Ե ՎՃԱՐՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿ.

Հարկի անունը հենց—«միասնական գյուղատն-
տեսական հարկ»—ցույց է տալիս, վոր դրանով
հարկվում է գյուղական տնտեսությունը, ավելի
ճիշտ—գյուղատնտեսական հարկ վճարում է յուրա-
քանչյուր մարդ կամ յուրաքանչյուր կազմակեր-
պություն, վորը պարագում է գյուղատնտեսու-
թյամբ և դրանից յեկամուտ և ստանում:

Գյուղատնտեսական հարկի կանոնագրության

առաջին կետը այդպես ել առում է. «Միասնական
գյուղատնտեսական հարկին յենթակա չե գյուղա-
տնտեսությամբ պարապող ամբողջ ազգաբնակու-
թյունը, ինչպես նաև կոլլեկտիվ տնտեսություննե-
րը (կոմմունաները, արտելները, բնակչություն-
ները) և խորհրդային տնտեսությունները, վորոնք
յեկամուտ են ստանում 2-րդ հոգվածում թված
ազրյուրներից :

Իսկ Կանոնադրության յերկրորդ հորդվածը
մանրամասն ցույց է տալիս, թե յեկամախ հատկա-
պես վո՛ր ազրյուրներն են համարվում գյուղատն-
տեսությունից ստացված յեկամուտներ, ուստի և
հարկվում են միասնական գյուղատնտեսական
հարկով :

Ամենից առաջ, ի հարկե, այդպիսի յեկամուտ
են հանդիսանում հացահատիկային մշակույթների
ցանքից ստացված յեկամուտները : Որենքի մեջ այդ
յեկամուտները կոչվում են դաշտամշակությունից
ստացված յեկամուտները : Հետո գալիս են մարգա-
պործությունից (այսինքն՝ խոտհարքներից) ստաց-
ված յեկամուտները, լինի դա՛ բնական մարգապե-
տիներում հնձած խոտ, թե ցանովի խոտ. ուղա՛
խոշոր յեղջյուրավոր ու լծկան անասունի յեկամու-
տը, մանր անասունի և արգյունաբերական բնույթ
ունեցող գյուղատնտեսական հատուկ ճյուղերի յե-
կամուտները, այսինքն՝ բանջարբուծությունից,
պահեզպանությունից, խաղողագործությունից,
պարտեզպանությունից, ծխախոտագործությունից,

մեղվարժուծությունից և աշխից ստացված յեկամութունները և, վերջապես, վո՛չ գյուղատնտեսական վաստակներից ստացվող յեկամութունները:

Այդպիսով մենք տեսնում ենք, Վոր գյուղատնտեսական հարկով հարկվելուն յենթակա յեն գյուղացիական տնտեսության ստացած բոլոր յեկամութունները:

Այս բոլոր ճյուղերից ստացված յեկամութունները պետք է անպայման մացվեն հարկման մեջ, Վորպեսզի մենք կարողանանք ուղիղ ու համաչափորեն, այս կամ այն տնտեսության իրական յեկամութուններով յան և ուշի համեմատ, Վորոչեւ նրանից հոգուտ պետության ստանալիք հարկի չափը:

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՐԿՄԱՆ ՄԵՋ ՄՏՑՎԱԾ ԵՆ ՎՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՆԵՐԸ.

Այստեղ արժե կանգ առնել այն հարցի վրա, թե ինչո՞ւ խորհրդային իշխանությունը կարևոր է համարել հարկման մեջ մացնել գյուղական ծխի այն յեկամութունները, Վոր անցյալ տարիներում չէին հարկվում գյուղատնտեսական հարկով:

Վորպեսզի մենք հասկանանք դրա անհրաժեշտությունը և համոզվենք, թե այդ բանն արված է հոգուտ արդարացի հարկման, խոսենք սրինակներով:

Վերցնենք յերկու տնտեսություն: Ասենք սրանցից յուրաքանչյուրն ունի հնգական շունչ. թե՛ առաջինը, և թե յերկրորդը ունեն միևնույն քանակու-

Թյմար վարելահող, ասենք՝ 3-ական դեսյատին, նրանք ունեն նաև հավասար Թվով լծկաններ ու գրաստներ և այլ մշակույթներ—4 գլուխ լծկան ու գրաստ, $\frac{1}{4}$ դեսյատին բանջարանոց և $\frac{1}{4}$ դեսյատին այգի:

Համաձայն հին օրենքի՝ այդ յերկու տնտեսությունները պետք է վճարելին իրար բոլորովին հավասար հարկ, վորը մոտավորապես 7 ուրբ. 50 կոպ. կանի: Բայց այս տնտեսություններից յերկրորդը, բացի այն բոլորից, ինչ հիշեցինք վերևում, յեկամուտ է ստանում նաև դարբնոցից: Այս դարբնոցը կարող է նրան տարեկան 100 ուրբլի, գուցե ե՛լ ավելի, յեկամուտ տալ: Հին օրենքով այդ 100 ուրբլի յեկամուտը հաշվի չեն առնվում, մինչդեռ, յուրաքանչյուր գյուղացու համար պարզ ու հասկանալի չե, վոր 100 ուրբլի յեկամուտը խոշոր նշանակություն ունի գյուղացիական տնտեսության մեջ: Գյուղական այդպիսի ծուխը 100 ուրբլով կարող է ձեռք բերել իր տնտեսության համար անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ և գրանով հենց՝ զգալիորեն ավելացնել իր հողերից ստանալիք յեկամուտը: Ուրեմն, նույն քանակությամբ անասուն և հող ունեցող այս յերկու տնտեսությունները իրականի մեջ իրենց կարողությամբ հավասար չեն. այսինքն՝ նրանցից մեկն ավելի հարուստ է, մյուսը—ավելի աղքատ, մինչդեռ անցյալ տարի յերկուսն ել վճարում էին

միևնույն հարկը—7 սուբլի 50 կոպ. յուրաքան-
չյուրը:

Բանվորա-Գյուղացիական Խորհրդային Կառա-
վարությունը հարկման այդ ձևը համարեց անար-
դար, և, ի հարկե, յուրաքանչյուր գյուղացի հա-
մաձայն է գրան: Յեթե տնտեսությունը չքավոր
է, սակավունակ է, կնաչանակի՝ պետք է ավելի քիչ
եւ հարկ վճարի: Այդ պատճառով եւ նոր որեւքի մեջ
նախատեսված է, վոր տնտեսություններից հարկը
պիտի գանձվի վո՛չ միայն հողի ու անասունի
աված յեկամուսների համեմատ, այլ և բոլոր
արժեքավոր մշակույթներից, նմանապես վո՛չ
գյուղատնտեսական վաստակներից ստացվող յեկա-
մուսների համեմատ: Այդ տեսակ հարկումը շատ
ավելի համաչափ ու արդարացի յե:

Հարկման յենթակա գյուղատնտեսության յե-
կամտի աղբյուրները այդպես լայնացնելու հաշ-
վին իջեցրած է մեր գյուղատնտեսության հիմնա-
կան, գլխավոր ճյուղերի վրա ընկնող հարկի ծան-
րությունը: Այդ բանն ապացուցելու համար բերենք
հետևյալ որինակը.

№ 1 տնտեսություն ունի 5 շունչ, 5 գեոյատին
վարելահող, $\frac{1}{2}$ գեոյատին բանջարանոց, 2 գլուխ
լծկան և 2 գլուխ կթան անասուն:

№ 2 տնտեսությունն ունի 5 շունչ, 5 գեոյա-
տին վարելահող, $\frac{1}{2}$ գեոյատին բանջարանոց, 2
գլուխ լծկան, 2 գլուխ կթան անասուն և մի դարը-
նոց, վորից ստանում է տարեկան 100 սուբլի յե-
կամուտ:

1925-26 թվին դարբնոցից ստացված յեկամու-
տը չեն հարկվում, և այդ յերկու տնտեսություն-
ներն ել հարկվում են ին հավասար հարկով—յուրա-
քանչյուրը 16 ուրբ. 40 կոպ. :

№ 1 տնտեսությունը, վոր դարբնոց չունի, այս
տարի պետք է վճարի 13 ուրբլի 26 կոպ. հարկ,
իսկ № 2 տնտեսությունը, վոր ունի դարբնոց և
գրանից տարեկան ստանում է 100 ուրբլի յեկա-
մուտ, պետք է վճարի 22 ուրբ. 33 կոպ. :

Սակայն վոչ գյուղատնտեսական վաստակների
բոլոր տեսակներն ել յենթակա չեն հարկման:
Միասնական գյուղատնտեսական հարկից ազատ-
վում են այնպիսի անձանց յեկամուտները, վորոնք
հանդիսանում են մեր հասարակության ավելի ող-
տակար քաղաքացիներ, ավելի ոգտակար մեր գյու-
ղի, մեր ամբողջ գյուղացիության համար:

Հարկից ազատվող այդպիսի յեկամուտները
ներանք են, վոր ստացվում են՝

1. Աշխատավարձից—

ա) պարհակի կարգով կատարված աշխատան-
քի համար,

բ) գյուղատնտեսության մեջ բաարակի կատա-
րած աշխատանքի համար,

գ) ընտրովի խորհրդային (գործադիր կոմի-
տեների և գյուղական խորհուրդների) պաշտոններ
վարելու համար,

դ) Փոխադարձ Ոգնության և գյուղացիական

ստորին կոտակերատիվներում վարած ընտրովի պաշտոնների համար,

ե) գյուղական, գավառակային բժշկական և անասնաբուժական կազմի (բժիշկների, ատամնաբույժների, բուժականների, մանկաբարձուհիների և այլն), գավառակային գյուղատնտեսների և նրանց ուղեականների, գավառակային հողաշինարարների և մելիորատորների, անասնապահների, սրանց ուղեականների ու անասնային պահակների, գյուղական ժողովրդական ուսուցիչների, ժողովրդական դատավորների, գյուղական միլիցիայի, գավառակային ու շրջանային վիճակագիրների, գյուղական հիվանդանոցների և դպրոցների տեխնիշական կազմի աշխատանքի համար,

զ) գրական և կուլտ-լուսավորական աշխատանքների (գյուղաթղթակից, խրճիթավար և այլն) համար տրվող վարձատրությունը.

2) գինվորական ծառայողների ստացած բոլոր տեսակի բավարարությունները:

3) պետական հաստատություններից ստացվող կենսաթոշակները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.

Մենք արդեն պարզեցինք, Վոր հարկի ուղիղ ու արդարացի բաշխումը գյուղական առանձին առանձին տնտեսությունների միջև կախված է այն բա-

նից, թե վորքան ուղիղ կերպով մենք հարկման կեն-
թարկենք յուրաքանչյուր առանձին ծխի գյուղա-
տնտեսությունից ստացած բոլոր յեկամուտները:

Այժմ տեսնենք, թե ինչպե՛ս է կատարվում այդ
յեկամուտների հաշվառքը և ի՛նչ նշանակություն
ունի ուղիղ հաշվառքը ուղիղ հարկման համար:

Անցյալ տարիների վորձից մենք գիտենք, վոր
հաշվառքը կատարելիս հաճախ պատահում են գեպ-
քեր, յերբ այս կամ այն տնտեսությունը, ցանկա-
նալով ավելի քիչ հարկ վճարել, սխալ տեղեկու-
թյուններ է տալիս յեկամուտների մասին:

Որինակ, մի տնտեսություն, վոր ունի 3 գես-
յատին վարելահող, ցույց է տալիս, թե ինքը յեր-
կուս ունի իր ունեցած 5 գլուխ անասունի փախա-
րեն նա կարող է ցույց տալ 3, 1 գեսյատին խաղողի
այգու փոխարեն— $\frac{1}{2}$ գեսյատին և այլն: Մեծ մա-
սամբ այդպես թափցնում են ավելի հարուստ տնտե-
սությունները: Դա ինքին հասկանալի չէ: Վորքան
խոշոր է տնտեսությունը, այնքան դժվար է նրա
հաշվառքը, այսինքն՝ այնքան ավելի հեշտությամբ
է նա թափցնում իր յեկամուտները. ասենք, բացի
այդ, կուլակը միշտ էլ թե՛ ցանկություն, թե՛ ա-
վելի հնարավորություններ ունի՝ ծածկելու իր
յեկամուտները և վճարելու ավելի քիչ հարկ:

Այդ տեսակի կեղծումներ շատ վատ հետևանքներ
ունեն՝ թե պետության և թե ավյալ գյուղի կամ
չրջանի գյուղական համայնքի համար:

Նախ, յերբ տնտեսությունը թափցնում է իր

յեկամութները, նա վճարում է քիչ հարկ, իսկ դա
նշանակում է, վոր համաչափ, արդարացի հար-
կումն արդեն խախտվում է: Յեթե տնտեսությունն
ունի յերկու անգամ ավելի յեկամութ, քանի այն,
ինչ ցույց է տալիս նա, ինչ հաշվի յե տնված մեր
հարկային ապարատի կողմից, կնշանակե, նա պետք
է վճարի նույնքան հարկ, վորքան վճարում յե՝
թագցնողից յերկու անգամ ավելի փոքր, յերկու
անգամ ավելի աղքատ տնտեսությունը, և դուրս
կգա, վոր յերկու հարեաններ՝ —մեկը միջակ,
մյուսը՝ կուլակ, պետք է վճարեն միասնական գյու-
ղատնտեսական հարկի միևնույն գումարը. ուրիշ
խոսքով, հարկը կդառնա անարդարացի:

Նշանակում է՝ ամեն տեսակի կեղումն ա-
պրիների կերպով արտոնություն է տալիս մի տըն-
տեսության՝ ի դիմաց մյուսի:

Բացի այն, վոր սխալ հաշվառումը, իր յեկա-
մութների թագցնելը խախտում է արդարացի
հարկման սկզբունքը, —այլ և դա վնաս է հասցնում
ամբողջ պետությանն ու, մանավանդ, տեղական
ազգաբնակչությանը: Չե՞ վոր, միասնական գյու-
ղատնտեսական հարկն իր խոշոր մասով մտնում է
վոչ թե պետական բյուջեյի մեջ, այլ տեղականի
մեջ, այսինքն՝ իր խոշոր մասով նա ծախսվում է
տեղական կարիքների վրա: Հետևապես, իր յեկա-
մութները թագցնող ամեն մի տնտեսություն, այ-
սինքն՝ նա, ով լրիվ չի վճարում իրենից հասանելի
գյուղատնտեսական հարկը, ով ծածկում է իր յե-
կամտի աղբյուրները, նա գողանում է միաժամա-

նակ՝ թե տեղական ազգաբնակութիւնից, և թե պետութիւնից: Թաքցնողի չվճարած ամեն մի կոպեկը, ամեն մի ռուբլին, թուլացնում են մեր այն միջոցները, վորոնցով տեղական գործադիր կոմիտեները բարելավում են ամբողջ գյուղի, ամբողջ գյուղացիութեան դրութիւնը: Թե՛ դպրոցները, թե՛ գրադարանները և թե, մանավանդ, մեզ պետական կամուրջները, ճանապարհների բարեկարգութիւնը, — այդ բոլորը տուժում է. այդ բոլորը խոշոր չափով կախված է այն բանից, թե վորքան լրիւ, վորքան ուղիղ հաշվի կառնվեն գյուղական յուրաքանչյուր ծխի յեկամուտները, վորքան ուղիղ ու լրիւ կերպով կբաժանվի և կըզանձվի միասնական գյուղատնտեսական հարկը:

Այդպիսով, մենք կարող ենք ասել, վոր գյուղատնտեսութեան յեկամտի աղբյուրների լրիւ և ուղիղ հաշվառումը հանդիսանում է, մի կողմից, արդարացի հարկման գրավական, իսկ մյուս կողմից — ուղիղ ու լրիւ հաշվառումը, կեղումների դեմ մղված պայքարը, կավելացնեն տեղական յեկամուտները և հենց դրանով ազատ հնարավորութիւն կտան մեզ ծախսեր անելու՝ մեր ճանապարհների, դպրոցների ու հիվանդանոցների դրութիւնը յավանելու համար:

Ո՛Վ ՅԵՎ Ի՞ՆՁՊԵՍ Ե ԿԱՏԱ՛ՌԻՄ ՀԱՌՎԱՌՈՒՄԸ.

Ուղիղ և լրիւ հաշվառման ամբողջ կարևորութիւնը պարզելուց հետո, այժմ, տեսնենք թե ո՛վ է կատարում այդ հաշվառումը և ինչպես:

Մինչև ներկա տարին հաշվառումը կատարվում էր ֆինանսական բաժինների հատուկ գործակալների միջոցով, այսպես կոչված՝ հաշվառուների ձեռքով, վորոնց վրա յեր ընկնում նաև ուղիղ հաշվառման ամբողջ պատասխանատվությունը և այդ բարդ ու դժվար աշխատանքի ամբողջ ծանրությունը: Ճիշտ է, այդ աշխատանքին մասնակցում էին նաև գյուղացիների կողմից ընտրված մարդիկ ու գյուղխորհուրդները, սակայն նրանց մասնակցությունը, ինչպես ասում են, յերկրորդական էր, ձեական, այդ պատճառով էլ՝ շատ դժվար էր հասնել ցանկալի հետևանքների—ուղիղ ու լրիվ հաշվառման: Դա հասկանալի յե: Հաշվառուն գյուղ է գալիս մեկ-յերկու օրով, գյուղը չգիտե, քիչ է ծանոթ գյուղատնտեսությանը, այդ պատճառով՝ ճարպիկ ու խորամանկ կուլակի համար դժվար չէ նրան խաբելը: Իսկ ինքը ազդաբնակությունը բավարար չափով մասնակցություն չեր ցույց տալիս հաշվառման կամ պանիայի մեջ:

Բանվորա-Գյուղացիական Կառավարությունը, ցանկանալով ավելի ուղիղ ձևով կատարել միասնական գյուղատնտեսական հարկի բաժանումը, կամենալով ավելի արդարացի ձևով հարկել յուրաքանչյուր գյուղական ծուխ,—վորոչեւ է ամբողջ գյուղացիությունն ամենալայն չափով մանակից անել այդ աշխատանքին:

Այս տարվա օրենքը՝ ուղիղ ու լրիվ հաշվառման ամբողջ պատասխանատվությունը, հետեա-

պես նաև հաշվառման վերաբերյալ ամբողջ աշխա-
տանքը դրել է տեղական իշխանությունների, գյու-
ղական խորհուրդների վրա, հանձնարարելով
նրանց, վորպեսզի նրանք ամեն գյուղում գյուղա-
յիներին ամենատևիով ձևով մասնակից անեն հաշ-
վառման կամպանիային:

Այս տարի հաշվառուները այլևս կամպանիա-
յի ղեկավարներ չեն լինի, այլ կլինեն միայն տե-
ղական իշխանության—գյուղխորհուրդների կար-
գադրությունների տեխնիկական կատարածուներ:

Հաշվառուների այդ կազմը մենք պահում ենք
նրա համար, վորպեսզի ոգնած լինենք տեղական
իշխանությանը՝ հաշվառման վերաբերյալ տեխ-
նիկական աշխատանքում, այսինքն՝ գրանցումնե-
րը վարելու և հաշիվները կազմելու գործում:

Իսկ հաշվառքը, այսինքն՝ յուրաքանչյուր
գյուղական ծխի յեկամտի վորոշելը կախված է
գյուղական խորհուրդներից և ազգաբնակչու-
նից, վորը շահագրգռված է այն բանում, վոր-
պեսզի գյուղում իր յեկամուտները թագցնող վոր
մի մարդ չլինի—նա շահագրգռված է, վորպեսզի
միասնական գյուղատնտեսական հարկը անցկացվի
ուղիղ ու արդարացի:

Յուրաքանչյուր գյուղացի պետք է իր պարտքը
համարի՝ թե՛ գյուղական ժողովներում, վորտեղ
կատարվում է հաշվառքը և հայտարարվում են
յուրաքանչյուր տնտեսության ցուցմունքները, թե՛
գյուղխորհուրդներին գրավոր տեղեկություններ

տալով, յերևան հանել ամեն մի թաքցնողի, ուղղել
հարկատուների այն սխալ տեղեկությունները, վո-
րոնց նպատակն է՝ յեկամուտները թաքցնել և դրա-
նով թաքցնող տնտեսությունների հարկը իջեցնել:

ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Այժմ անցնենք գյուղատնտեսական տարբեր
մշակութիւններից ստացված յեկամուտները հաշ-
վելու կարգի քննությանը:

Ինքպես արդեն ասել ենք, վորպեսզի կարողա-
նանք հարկը վորոշել, պետք է յուրաքանչյուր
գյուղական առանձին ծխի վերաբերմամբ հաշվենք
այդ տնտեսության ամողջ յեկամտաբերությունը:
Յեկամուտներն այդպես հաշվել կարելի յե միայն
այն դեպքում, յեթե այդ յեկամտի յուրաքանչյուր
առանձին աղբյուրը կունենա յեկամտաբերության
իր վորոշ նորման (չափը): Չկա մի ծուխ, վորի բո-
լոր յեկամուտների միայն մի մշակութիւն լինին.
այսինքն՝ չկա այնպիսի ծուխ վորը միայն վարե-
լահող ունենա, և ուրիշ վորեւե յեկամուտ չունենա:
Գյուղական համարյա յուրաքանչյուր ծուխ ունի թե
գյուղատնտեսության գլխավոր ճուղերը, այսինքն՝
վարելահող կամ ցանք ու անասուն, թե, դրանից
դատ, այս կամ այն արժեքավոր, խնամաչատ մշա-
կութիւն—խաղողի այգի, բանջարանոցներ ու պար-
տեղներ, ծխախոտ, բամբակ և այլն:

Պարզ է, վոր այս մշակութիւններից յուրաքան-
չյուրն ունի իր վորոշ յեկամուտը: Որինակ, մի

դեպատին խաղողի այգին ավելի արդյունաբեր է,
քան մի դեպատին վարելահողը, յեղան աված յե-
կամուտն ավելի յե, քան խողինը, իսկ խողի աված
յեկամուտն ավելի յե, քան վոչխարինը: Այդ պատ-
ճառով, յուրաքանչյուր այգ տեսակ յեկամտի աղ-
բյուրի համար պետք է սահմանել իր յեկամտաբե-
րության վորոշ նորման:

Այդ նորմաները սահմանվելուց հետո արդեն
հնարավոր ու հեշտ է հաշվել գյուղական ծխի յե-
կամտի ամբողջ գումարը, վորի հիման վրա վո-
րոշվում է նաև միասնական գյուղատնտեսական
հարկի չափը:

ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ.

Անդրկովկասյան . Խորհրդային Կառավարու-
թյունը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-
տությունների Միության Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի կողմից նրան վերապահված իրավուն-
քով, Անդրկովկասի համար սահմանել է յեկամտա-
բերության հետևյալ նորմաները.

Մի դեպատին ցանքի յեկամուտը, միջին հաշ-
վով, ըստ յուրաքանչյուր հանրապետության, վոր
մտնում է Անդրկովկասի մեջ, այսինքն՝ Հայաստա-
նի, Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետություն-
ների, վորոշված է ամեն մի դեպատինից—45 ուր-
լի: Այդ նույն նորման էր և 1926-1927 թվին, վոր
մնացել է անփոփոխ նաև 1927-28 թվի համար:
Բայց վորովհետև բոլոր շրջաններում էլ մենք հար-

Կումբը չենք կատարում ըստ ցանքի, այլ հարկումը
 կատարում ենք նաև ըստ վարելահողի, այդ պատ-
 ճառով, վարելահողի համար սահմանված է առան-
 ձին նորմա—30 ուլբլի դեպատինից: Արժեքավոր
 մշակույթների համար այդ յերեք հանրապետու-
 թյունների—Հայաստանի, Վրաստանի ու Ադրբե-
 յեջանի վերաբերմամբ—սահմանված են հետևյալ
 նորմաները. բանջարանոցներն ու պահեզները—140
 ուլբլի, խաղողի այգիները—200 ուլբլի, կար-
 տոֆիլը— 140 ուլբլի: Մնացած արժեքավոր մշա-
 կույթների նորմաներն այս հանրապետությունե-
 րում, համաձայն նրանց իրական յեկամաի, սա-
 հմանվել են տարբեր չափով: Որինակ, պարտեզ-
 ներն Աբրբեջանում—160 ուլբլի, Հայաստանում—
 155 ուլբլի, իսկ Վրաստանում—170 ուլբլի. չալ-
 թուկը Ադրբեջանում— 45 ուլբլի, Հաաստանում՝
 195 ուլբլի և Վարաստանում 140 ուլբլի. ծխախոտը
 Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում—
 180 ուլբլի դեպատինից, Ափխազիայում, վորտե-
 դի ծխախոտը շատ ավելի բարձր տեսակի յե, մի
 դեպատին ծխախոտի յեկամուտը սահմանված է
 226 ուլբլի: Մանգարինի անկարանների մի դեպա-
 տինից—325 ուլբլի և թեյի դեպատինից—200
 ուլբլի:

Լճկան անասունի համար սահմանված են հե-
 տևյալ նորմաները. խոշոր յեղջյուրավոր լճկան ա-
 նասունի մի գլխից—13 ուլբլի, ձիուց, ուղտից և
 ջորուց—15 ուլբլի, եչից—5 ուլբլի, խոզից
 —5 ուլբլի:

Կթանի յեկամտաբերությունը, այսինքն՝ խո-
շոր յեղջյուրավոր արդյունաբեր անասունի և այծ
ու՝ վոջխարի յեկամտաբերությունը սահմանված և
այսպէս: Հայաստանի, Ադրբեջանի ու Արևելյան
Վրաստանի համար արդյունաբեր անասունը—13
ուր. 25 կոպ. Արևմտյան Վրաստանի համար,
վորտեղ մի շարք պատճառներով արդյունաբեր ա-
նասունի յեկամուտը շատ ավելի ցածր է, մի գլուխ
անասունի յեկամտաբերությունը սահմանված և
10 ուր. 50 կոպ. Հայաստանի, Ադրբեջանի ու
Արևելյան Վրաստանի համար վոջխարն ու այծը—
2 ուր. 55 կոպ., իսկ Արևմտյան Վրաստանի հա-
մար—1 ուր. 55 կոպ.:

Այդպիսով, ինչպէս տեսնում ենք այս նորմա-
ներից, ըստ գյուղատնտեսության ճյուղերի, այ-
սինքն՝ ըստ վարելահողի, ցանքի ու բոլոր անա-
սունների, յեկամտաբերության անցյալ տարվա
նորմաները չեն բարձրացված ու մնացել են անփո-
փոխ, և միայն մի քանի արժեքավոր մշակույթնե-
րի վերաբերմամբ յեկամտաբերության նորմանե-
րը մի փոքր բարձրացրած են նրա համար, վոր-
պէսզի ավելի համաչափ ու արդարացի դառնա
հարկի ծանրությունը այն տնտեսությունների մի-
ջև, վորոնցից վոմանք ունեն արժեքավոր մշա-
կույթներ, իսկ վոմանք չունեն:

Այժմ մնում է բամբակի յեկամտաբերության
նորմաների հարցը: Բանն այն է, վոր խորհրդային
մեր յերկրի համար բամբակը այնքան կարևոր ու

այնքան անհրաժեշտ է, վոր նրան մենք չենք կարող
մոտենալ նույն չափանիշով, ինչով մոտենում ենք
գյուղատնտեսության մնացած բոլոր ճյուղերին:

Սորհրդային Միության մեջ մշակված ամբողջ
բամբակը գործադրվում է արդյունաբերության
կարիքի համար. մանածային գործրաններում կը-
տորեղեններ են պատրաստում լայնածիր Սորհր-
դային Միության սպառողների համար: Բայց մեր
գաշտերում մշակված բամբակը հերիք չի անում
մեր Փաբրիկաներին ու գործարաններին, այսինքն՝
մենք բավարար քանակությամբ բամբակ չունենք,
վորպեսզի կարողանանք քաղաքին ու գյուղին մա-
տակարարել անհրաժեշտ չափով մանուֆակտուրա,
և մեր արդյունաբերությունն ստիպված է հսկայա-
կան քանակությամբ բամբակ գնել արտասահմա-
նում, վճարելով վոսկի, վոր բոլորովին ձեռնաու-
չե մեզ համար: Այդ պատճառով՝ Սորհրդային
կառավարությունը, — վորպեսզի քաջալերի այն
տնտեսությունները, վորոնք բամբակ են ցանում,
և լայնացնի ու մեծացնի բամբակի ցանքը, — վորո-
շել է բամբակի ցանքերը, միասնական գյուղհար-
կով հարկելու տեսակետից, գնել արտոնյալ պայ-
մանների մեջ:

Ահա թե ինչո՞ւ բամբակի յեկամտաբերության
համար վերցված է վո՞չ թե իսկական նորման, այլ
հատուկ արնառյալ նորման:

Ամբողջ Անդրկովկասի համար այդ նորման
սահմանված է 22 սուր. 50 կոպ. դեսյատինից:

ՅԵԿԱՄՏԻ ՀԱՇՎԵԼԸ

Այժմ որինակով նայենք—տեսնենք, թե ի՞նչ պես է կատարվում առանձին, անտեսությունների յեկամուսանների հաշվելը:

Վերցնենք յերկու անտեսություն: № 1 արն—տեսությունն ունի 2 դեռյառին վարելահող, $\frac{1}{2}$ դեռյառին խաղողի այգի, $\frac{1}{2}$ դեռյառին բանջարանոց ու պահեղ, 3 գլուխ լծկան և 2 կով:

Յերկրորդ անտեսությունն ունի—2 դեռյառին վարելահող, $1\frac{1}{2}$ դեռյառին բամբակ, 4 գլուխ լրծկան, 2 կով և 20 վոջխար:

Առաջին անտեսության յեկամուտը կլինի՝

2 դեռ. վարելահող 30-ական ուր.	60 ո.	—	կ.
$\frac{1}{2}$ դեռ. խաղողի այգի	100 »	—	»
3 գլուխ լծկան	39 »	—	»
2 կով	26 »	50	»

Ուրեմն, այս անտեսության ստացած ամբողջ յեկամուտը հաշվում է . 295 ո. 50 կ.

Յերկրորդ անտեսության յեկամուտը հաշվում է հետևյալ կերպով՝

2 դեռ. վարելահող	60 ո.	—	կ.
$1\frac{1}{2}$ դեռ. բամբակ	33 »	75	»
4 գլուխ լծկան	52 »	—	»
2 կով	26 »	50	»
20 վոջխար	51 »	—	»
Ընդամենը յեկամուտ	223 ո.	25	կ.

Այդ ձևով հաշվվում է առանձին անտեսություն—

ների յեկամտաբերության ամբողջ գումարը, և այստեղից արդեն հաշվվում և հարկի գումարը, նա-
յած չնչերի թվին:

Բայց այստեղ անհրաժեշտ և նկատել, վոր յե-
կամտաբերության այդ նորմաները, վորոնցով մենք
այստեղ ոգտվեցինք, յուրաքանչյուր առանձին
գյուղում կարող են տարբեր լինել, և ահա թե ին-
չո՛ւ: Յեկամտաբերության այն նորմաները, վոր
սահմանել և ժողովրդական Կոմիտեների Անդրը-
կովկասյան Խորհուրդը հանրապետությունների
համար, հանդիսանում են միջինը ամբողջ հանրա-
պետության համար: Սակայն մենք գիտենք, վոր
տարբեր գավառներում, յերբեմն միևնույն գավառի
նաև տարբեր գավառակներում, բոլորովին տարբեր
և լինում ինչպես վարելահողի, նույնպես և անա-
սունի ու արժեքավոր մշակույթների յեկամտաբե-
րությունը:

Այդ պատճառով, յուրաքանչյուր հանրապե-
տության—Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեյջա-
նի—կառավարություններին իրավունք և արված,
հաշվի առնելով գյուղատնտեսության այս կամ այն
ճյուղի տարբեր յեկամտաբերությունն առանձին
չրժաններում,—բարձրացնել կամ իջեցնել այդ նոր-
մաները: Այդ պատճառով էլ, կարող և պատահել,
վոր մի գավառում, նայած փաստացի յեկամտաբե-
րությանը, վարելահողը հաշվվի 20 ուրբլի, մյու-
սում—30 ուրբ., յերրորդում—40 ուրբլի: Իսկ
արժեքավոր մշակույթների նորման կարող և ստաց-

վել հակառակը, այսինքն՝ այն գավառում, վորտեղ վարելահողը կլինի 20 ուրբ., խաղողի այգու յեկամամտաբերության նորման կարող է լինել բարձր, քան այն գավառում, վորտեղ մի գեսյատին վարելահողի յեկամուտը գնահատվում է 40 ուրբլի:

Այդ պատճառով, մեր բերած որինակները ցույց են տալիս միայն, թե ինչպես է հաշվվում յեկամամտաբերությունը, բայց իրենք՝ նորմաները յուրաքանչյուր առանձին գավառում, յուրաքանչյուր առանձին գյուղում կարող են վորոշ գեպքերում լինել ավելի բարձր, իսկ վորոշ գեպքերում՝ ավելի ցածր, քան սահմանված միջին նորմաները:

Այժմ մնում է վորոշել՝ վո՛չ գյուղատնտեսական վաստակներից ստացված յեկամտի հարցը:

Այստեղ, իհարկե, վո՛չ մի կերպ չի կարելի յեկամամտաբերության կայուն (հաստատուն) նորմաներ սահմանել յեկամտի այս կամ այն տեսակի համար: Դա հասկանալի է: Բանն այն է, վոր մի տնտեսության մեջ յեղած մի զույգ բեռնատար ձին, կարող է ավելի յեկամուտ տալ, քան մի ուրիշ տնտեսության 3 ձին: Այդ կախված է այն բանից, թե այս կամ այն տնտեսության, գտնված շրջանում, բեռնատարության գործը ինչպիսի ծավալ, հաջողություն ունի: Բացի այդ, կարող է պատահել, վոր մի տնտեսություն ունի Փայտոն, վորով կայարանից ճանապարհորդներ են տանում-բերում, իսկ մյուսը չունի և այլն. ուրիշ խոսքով, վո՛չ գյուղատնտեսական վաստակներից ստացված

յեկամուտը վորոշելիս՝ կարող են յուրաքանչյուր շրջանում և յուրաքանչյուր տնտեսութեան մեջ աշխատանքային ընդմիջիվ տարրեր առանձնահատկութեաններ լինել, վորոնք առաջուց նախատեսելն ու հաշվի տանելը անհնարին է։ Ահա թե ինչո՞ւ չի կարելի որենքի մեջ հրատարակել կայուն նորմաներ վո՛չ գյուղատնտեսական վաստակների յեկամտարութեան համար։

Յուրաքանչյուր առանձին տնտեսութեան մեջ յեկամուտների չափի վորոշելը թողնվում է գյուղական խորհուրդներին՝ գյուղացիների կողմից ընտրված մարդկանց մասնակցութեամբ։

Այստեղ որենքը սահմանում է՝ այս յեկամուտները հարկելու ընդհանուր գլխավոր կանոնները միայն։ Այսպես որինակ, աշխատավարձը հարկվում է միայն այն դեպքում, յերբ աշխատավարձ տալու անձը, շարունակ ապրում է իր տնտեսութեան մեջ։ Իսկ յեթե ընտանիքի անդամը, վոր ստանում է այս աշխատավարձը շարունակ ապրում է իր գյուղական տնտեսութեանից դուրս, այդ դեպքում հիշյալ աշխատավարձը չի՝ հարկվում գյուղատնտեսական հարկով։ Սակայն, այդ դեպքում այդ անձերը չեն մտցվում նաև տնտեսութեան շնչերի թվի մեջ։

Հարկման մեջ են մտնում նաև այն յեկամուտները, վոր ստացվում են՝ աշխատավորների իրենց ընկալվալից դուրս կատարած արհեստներից։

Վո՛չ գյուղատնտեսական վաստակների յերկ-

լորդ տեսակը, վոր յենթակա յե հարկման, դա—
տնայնագործների վաստակն է: Յեվ վերջապես,
վո՛չ գյուղատնտեսական վաստակների յերրորդ
տեսակը կազմում են—մնացած վո՛չ գյուղատնտե-
սական բոլոր յեկամուսաները, ինչպես որինակ—
չենքերի վարձակալությունը, աղացներ ունենալը,
գյուղատնտեսական գործիքները վարձով տալու
վճարը և այլն:

Բոլոր այս յեկամուսաները յենթակա յեն հարկ-
ման վո՛չ լրիվ չափով, այլ միայն մասնակի կեր-
պով, ըստ վորում, այդպիսի հարկման յենթարկ-
վելու չափը տարբեր է:

Այսպես որինակ, հարկման է յենթարկվում
աշխատավարձի 15 տոկոսը, իրենց տնտեսությունից
դուրս ապրող արհեստավորների աշխատանքի (յե-
կամտի) 10 տոկոսը, տնայնագործների ու արհես-
տավորների յեկամուսաների—50 տոկոսը և մյուս
վո՛չ գյուղատնտեսական վաստակների—70 տո-
կոսը:

Դա նշանակում է, վոր յեթե մշտապես իր տրն-
տեսության մեջ ապրող տնձի աշխատավարձը
կազմում է, որինակ, տարեկան 300 ոսկւի, հապա,
ամբողջ տնտեսության հարկվելիք յեկամտի մեջ
մտնում է վո՛չ թե ամբողջապես հիշյալ 300 ոսկւ-
ին, այլ աշխատավարձի միայն 15 տոկոսը, վոր տ-
նում է 45 ոսկւի: Յենթադրենք, վոր այդ աշխա-
տավարձն ստանում է հենց այն տնտեսության ան-
դամներից մեկը, վորի մասին մենք խոսեցինք նա-

խորդ գլխում, այսինքն՝ № 2 տնտեսության ան-
դամը: Այնտեղ գյուղատնտեսության ճյուղերից
ստացված յեկամուտը մենք հաշվեցինք 223 ուրբլի
25 կոպեկ: Ուրեմն, , վորպեսզի ստանանք տնտե-
սության յեկամտի ընդհանուր գումարը, մենք այդ
223 ու 25 կոպեկին պետք է ավելացնենք 45 ուրբ-
լի, վոր կազմում է ամբողջ աշխատավարձի (300 ու.)
15 տոկոսը:

Այդպիսով, այս տնտեսության ընդհանուր յե-
կամուտը, վոր յենթադա յե հարկման, կազմում է
268 ուրբ. 25 կոպ.:

Այժմ յենթադրենք, թե № 1 տնտեսությունը
(մեր նախկին որինակից) ունի դարբնոց, վորի յե-
կամուտը գյուղական խորհուրդը վորոչել է 200
ուրբլի: Ինչպես արդեն ասացինք, հարկման յեն-
թադա յե տնայնագործների և արհեստավորների յե-
կամուտների 50 տոկոսը. դա նշանակում է, վոր
այս տնտեսության գյուղատնտեսական բնույթ
ունեցող 292 ուրբ. 50 կոպ. յեկամտին պետք է ավ-
ելացնել դարբնոցից ստացված վոչ թե ամբողջ
200 ու., այլ միայն դրա 50 տոկոսը, այսինքն՝ կեսը
կամ 100 ուրբլի:

Այդպիսով, № 1 տնտեսության հարկվելիք յե-
կամուտը կազմում է 292 ու. 50 կ. ավելացրած 100
ու., վոր անում է 392 ու. 5 կ.:

Այժմ արդեն գիտենք, թե ինչպես է հաշվվում
յուրաքանչյուր տնտեսության յեկամտի ամբողջ
գումարը, վոր ստացվում է թե արժեքավոր մշա-

կույթներն և թե վոչ գյուղատնտեսական վաս-
տակներն: Հիմա տեսնենք, թե ինչպե՞ս է հաշվվում
հարկի չափը:

ՀՍՐԿԻ ՀԱՇՎԵԼԸ.

Այժմ, յերբ մենք իմացանք, Վոր հարկը հաշ-
վելու համար վերցվում է տնտեսության յեկամտի
ամբողջ գումարը և այդ ամբողջ գումարի համե-
մատ հաշվվում է հարկը, — տեսնենք, թե ինչպե՞ս
և ինչ հիման վրա յե վորոշվում հարկի չափը:

Մենք արդեն ասել ենք, թե վորքան ավելի ու-
նեոր է տնտեսությունը, վորքան ավելի շատ է
նրա յեկամուտը, այնքան ել բարձր է նրանից գանձ-
վելիք հարկը:

Հարկը հաշվելու այն կարգը, — յերբ յեկամտի
յուրաքանչյուր ավելորդ ուրբուց կամ յեկամտի
ավելորդ չերվոնեցից գանձվում է ավելի շատ
հարկ, քան նախորդ ուրբուց, — կոչվում է հառա-
ջատվական սկզբունք կամ, ավելի ճիշտ ասած, հա-
ռաջատվության սկզբունքի վրա հիմնված հարկ:
Որինակ, յեթե յեկամտի առաջին չերվոնեցից
վերցվում է 20 կոպեկ հարկ, յերկրորդ չերվոնե-
ցից, այսինքն՝ յեկամտի մեկից վեր չերվոնեցից
վերվում է 30 կոպեկ, յեկամտի յերրորդ չերվոնե-
ցից, այսինքն՝ 20 ուրբուց վեր չերվոնեցից վերց-
վում է 50 կոպ. հարկ և այլն: Հառաջատվության
այս սկզբունքի վրա յել կառուցված է միասնական
գյուղատնտեսական հարկը:

Պյուղատնտեսական հարկը հաշվելու յերկրորդ սկզբունքը, այսինքն՝ յերկրորդ կանոնը դա—չնչի վրա ընկնող, և վոչ թե տնտեսության վրա ընկնող, յեկամտի համեմատ հարկ հաշվելն է:

ՈՐԻՆԱԿ: Յերկու տնտեսություն, վորոնցից մեկում կա 5 շունչ, իսկ մյուսում—3 շունչ, ունեն 300-ական ուրբլի յեկամուտ: Դրանց հարկը տարբեր է, և ահա թե ինչու: 5 շունչ ունեցած դեպքում՝ չնչին ընկնում է 60 ուրբլի յեկամուտ, իսկ 3 շունչ ունենալու դեպքում 100 ուրբլի և վորովհետև միասնական դյուղատնտեսական հարկը—հառաջատվական հարկ է, այսինքն՝ յեկամտի յուրաքանչյուր մասից վերցվում է արդեն ուրիշ կողար, յեկամտի յուրաքանչյուր մասից վերցվում է ավելի շատ կողակ, հետևապես հասկանալի չէ, վոր յերկրորդ դեպքում (3 չնչի համար) ինքնին հարկն ել ավել կլինի: Վորպեսզի կարողանաք այդ բանը մեզ պատկերացնել, նախ ծանոթանանք հարկի կողարների հետ և ապա հաշվենք 300 ուրբլի յեկամուտ ունեցող տնտեսության վրա ընկնող հարկը, 5 ու 3 շունչ ունենալու դեպքում:

Որենքով, անցյալ տարվա նման, հարկի հետևյալ կողարներն են սահմանված.—

Շնչին ընկնող առաջին 20 ա. յեկամտից գանձվում է յուրաքանչյուր ուրբլուց 2 կոպ:

Շնչին 20 ա. վեր մինչև 30 ա. ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուրբլուց 3 կոպեկ:

Շնչին 30 ու վեր մինչև 40 ուսերլի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 5 կոպեկ:

Շնչին 40 ու վեր մինչև 50 ուսերլի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 10 կոպ.

Շնչին 50 ու վեր մինչև 60 ուսերլի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 17 կոպ.

Շնչին 60 ու վեր մինչև 80 ուսերլի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 21 կոպ.

Շնչին 80 ու վեր մինչև 100 ուսերլի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 23 կոպ.

Յեվ վերջապես, շնչին 100 ուսերլուց ավելի ընկնող յեկամտի ավելցուկից գանձվում է յուրաքանչյուր ուսերլուց 25 կոպ.

Այժմ վենցնենք մի որինակ: Ինչպես արդեն ասացինք, մեր առաջին որինակն է—5 շնչատեր տնտեսությունը, վոր ունի 300 ուսերլի յեկամուտ:

Յերկրորդ որինակն է—3 շնչատեր տնտեսությունը, վոր ունի միևնույն յեկամուտը, այսինքն՝ 300 ուսերլի:

Առաջին տնտեսության մեջ (5 շնչատեր) ասացվում է հետևյալ հարկը՝

Առաջին կոպարով՝ 20-ական ուսեր. շնչին, 100

սուբ., յուրաքանչյուր սուբլուց 2 կոպ. հարկ,—
2 սուբլի:

Ապա շնչին 10-կան սուբ.—50 սուբ. յուրա-
քանչյուր սուբլուց 3 կոպ.— $1\frac{1}{2}$ սուբլի:

Հետևյալ 50 սուբլու յուրաքանչյուր սուբլուց
5 կոպ.—2 սուբ 50 կոպ.

Հետևյալ 50 ս. յուրաքանչյուր սուբլուց 10 կ.
—5 ս.

Վերջապես, վերջին 50 սուբլու յուրաքանչյուր
սուբլուց 17 կոպ.—8 սուբ. 50 կ. Այդպիսով, ըն-
դամենն այս տնտեսությունից ստացվելու յե 19
սուբ. 50 կ. հարկ:

Յերկրորդ որինակում հստացվի ավելի հարկ,
և ահա թե ինչո՛ւ.

Առաջին կոպարով, այսինքն՝ յուրաքանչյուր
սուբլուց 2 կոպ., հարկվելու յե 60 սուբլի, վորից
հստացվի 1 սուբ. 20 կոպ. հարկ.

Յերկրորդ կոպարով հարկվելու յե—30 սուբլի,
յուրաքանչյուր սուբլուց 3 կոպեկ—90 կոպ.

Յերրորդ կոպարով հարկվելու յե—30 սուբլի,
յուրաքանչյուր սուբլուց 5 կոպեկ—1 սուբլի 50
կոպ.

Չորրորդ կոպարով հարկվելու յե—30 սուբլի,
յուրաքանչյուր սուբլուց 10 կոպ.—3 սուբլի.

Հետևյալ կոպարով հարկվելու յե—30 սուբլի,
յուրաքանչյուր սուբլուց 17 կոպեկ—5 սուբ. 10
կոպ.

60 սուբլու յուրաքանչյուր սուբլուց 21 կոպեկ

—12 ս. 60 կող. և վերջապես, վերջին 60 սուբյու-
յուրաքանչյուր սուբյուկ 23 կողեկ—13 ս. 80 կող.

Ընդամենն այս տնտեսությանից ստացվելու յե-
38 սուբ. 10 կող. հարկ:

Ինչպես յերևում և այս օրինակներից, յերկու
տնտեսության, վոր ունեն միևնույն յեկամուտ,
լայց տարրեր թվով չնչեր, վճարում են տարրեր
հարկ, այսինքն՝ այն տնտեսությանները, վոր-
տեղ չնչին ընկնում և ավելի յեկամուտ, վճարում են
իրենց յեկամուտների ավելի մեծ մասը, քան այն
տնտեսությանները, վորտեղ չնչին ավելի քիչ յե-
կամուտ և ընկնում:

Վորհրդային իշխանությանն ընդունել և միաս-
նական գյուղատնտեսական հարկի այդպես հաշ-
վելու կարգը այն հասարակ պատճառով, վոր ավե-
լի ունեւոր տնտեսությանները, այսինքն այն տըն-
տեսությանները, վորտեղ չնչին ավելի յեկամուտ
և ընկնում, հնարավորության ունեն իրենց յեկա-
մըտի ավելի մեծ մասը տալու՝ հասարակության
և պետության կարիքները հոգալու համար:

Յուրաքանչյուր գյուղացի հեշտությամբ կը-
հասկանա, վոր ինչքան ավելի աղքատ և մի տնտե-
սության, ինչքան ավելի սակավունակ և նա, այն-
քան ավելի դժվար և նրանից վերցնել՝ թեկուզ մի
կողեկ այս կամ այն կարիքի համար: Հետևապես,
նրա համար ավելի դժվար և վճարել նաև միաս-
նական գյուղատնտեսական հարկը, քան ունեւոր

տնտեսութեան համար, քան շնչին ավելի շատ յեկամուտ ընկնող տնտեսութեան համար:

Այդ իսկ պատճառով, Բանվորա-Փյունդացիական Կառավարութիւնը, հաշվի առնելով ամբողջ գյուղացիութեան շահերը, իսկ առանձնապէս հող տանելով գյուղում ունեցած իր գլխավոր նեցուկի-չքավորների մասին, ապա նաև միջակների մասին, — ընդունել է հենց այնպիսի որոշումներ, վոր ամենամեծ արտոնութիւններն են տալիս չքավոր և սակավունակ տնտեսութիւններին:

Այդ ձևով, այսինքն՝ հարկը թեթեւացնելու միջոցով, թույլ տնտեսութիւններին համար հարկը նվազեցնելու յեղանակով, մի շարք այլ միջոցների հետ միասին, խորհրդային իշխանութիւնն ոգնում է սակավունակ տնտեսութեանը, վորպէսզի նորարձրանա, ամրանա և լավացնի իր դրութիւնը:

Սակայն այստեղ անհրաժեշտ է պարզել որոշումների մի կետը.

Բանն այն է, վոր քիչ շնչատեր տնտեսութիւնները, այսինքն՝ այն տնտեսութիւնները, վորոնք ունեն մեկ յերկու շունչ, միշտ ավելի թույլ են 5, 6 և ավելի շնչատեր տնտեսութիւններից: Ավելի թույլ են, նախ այն պատճառով, վոր միշտ նրանց աշխատող ձեռքերը պակաս են, ապա, մեծ մասամբ, նրանք չունեն ինվենտար, չունեն լծկան, չունեն գրաստ և այլն:

Վերցնենք յուրկու տնտեսութիւն, վորոնցից յուրաքանչյուրն ունի 120 ուրբլի յեկամուտ: Դրանցից մեկում կա 5 շունչ, մյուսում — մեկ:

Ստացվում է այսպիսի պատկեր. 5 շունչ ունեցող տնտեսության մեջ յուրաքանչյուր շնչին ընկնում է 24 ու. յեկամուտ, այսինքն՝ այս տնտեսությունը միանգամայն սակավունակ է, - և նրանից դանձվելիք հարկը չափազանց շնչին կլինի:

Իսկ մի շունչ ունեցող տնտեսության մեջ ամբողջ յեկամուտն ընկնում է այդ միակ շնչին, այսինքն՝ դուրս է գալիս, վոր տնտեսության մեջ մի շնչին ընկնում է 120 ու. յեկամուտ: Կարծես թե դա կուլակի տնտեսություն է: Բայց իրապես դա կուլակի տնտեսություն չէ: Շնչին այնքան բարձր յեկամուտ է ընկնում միայն այն պատճառով, վոր այդ տնտեսությունն ունի միայն մեկ շունչ, իսկ տնտեսությունն ինքն ըստինքյան՝ յեթե չքավոր չլինի, համենայն դեպս, կուլակային չէ, այլ միջին կարողութան տեր տնտեսություն է:

Ահա ինչո՛ւ միասնական գյուղատնտեսական հարկին վերաբերյալ խորհրդային որենքը արտոնություններ է սալիս քիչ շնչատեր տնտեսություններին:

Հառաջատվական է շնչային սկզբունքներով հարկված այն տնտեսությունը, վորը միայն մեկ շունչ ունի, ադատվում է իր հարկի գումարի 30 տոկոսից.

Որինակ, յեթե մեկ շունչ ունեցող տնտեսության հարկը հաշվված է 10 ուլբլի, այդ դեպքում, դրանից կզեղչվի 3 ուլբլի, և տնտեսությունից կզանձվի 7 ուլբլի հարկ.

Յերկու շունչ ունեցող տնտեսություններին
զեղչ և արվում 20 տոկոս, այսինքն՝ հաշվված 10
սուբլի հարկից զեղչվում և 2 սուբլի, և տնտեսու-
թյունը վճարում և 8 ս. հարկ: Իսկ յեթե յերկու
շունչ ունեցող տնտեսության մեջ շնչերից մեկն
տնաշխատունակ և, այդ զեպքում՝ նրան արվում և
նույն զեղչը, ինչ արվում և մի շնչատեր տնտեսու-
թյանը, այսինքն՝ 30 տոկոս, կամ հաշվված հարկի
գումարի յուրաքանչյուր սուբլուց 30 կոպեկ զեղչ:

Սակայն, անպայման բոլոր տնտեսություննե-
րն ել յենթակա չեն միասնական գյուղատնտեսական
հարկին:

Խորհրդային կառավարությունը, հոգ տանե-
լով չքավորի մասին և ցանկանալով ոգնել նրան,
վորպեսզի նա բարձրացնի իր տնտեսությունը,
սահմանել և այնպիսի կարգ, վորի շնորհիվ՝ գյուղի
չքավոր փոքրիկ մասը բոլորովին ազատվում և
հարկվելուց:

ԶԱՐԿՎՈՂ ՄԻՆԻՄՈՒՄԸ

1927-28 թվի միասնական գյուղատնտեսական
հարկի կանոնադրությունը չքավոր տնտեսություն-
ների համար սահմանել և չհարկվող մինիմում: Դա
նշանակում և, թե այն տնտեսությունները, վորոնց
յեկամուտն ավելի չե սահմանված վորոշ գումա-
րից, կամ, ինչպես տաում են, ավելի չե սահման-
ված մինիմումից, -- ազատվում են հարկից:

Որենքի մեջ սահմանված և չհարկվող մինիմու-

մի հետեյալ չափը. մեկ և յերկու շունչ ունեցող տնտեսությունների համար—90 ուրբլի, յերեք և չորս շունչ ունեցող տնտեսությունների համար—100 ուրբլի և 5 ու ավելի շնչեր ունեցող տնտեսությունների համար 110 ու.

Այդ նշանակում է, թե մի տնտեսություն, վոր ունի 2 շունչ, և վորի յեկամուտն ավելի չե 90 ուրբլուց, —ազատվում է հարկից: Այն տնտեսությունը, վոր ունի 3 կամ 4 շունչ, և վորի յեկամուտն ավելի չե 100 ուրբ., նույնպես ազատվում է հարկից: Յեւ վերջապես, այն տնտեսությունը, վորը 5, 6, 7 ու ավելի շնչեր ունի, և վորի յեկամուտն ավելի չե 110 ուրբլուց, նույնպես հարկ չի վճարում: Այդ որենքը հնարավորություն է տալիս մեզ՝ ազատելու միասնական գյուղատնտեսական հարկից մեր գյուղացիության ամենաչքավոր մասը: Անցյալ տարի հարկից ազատ յեկամուտի միւնիստր (նվազագույնը) ուրիշ եր: 1926-27 թվի որենքում ասված եր, վոր հարկից ազատ յեկամուտի միւնիստր մեկ շնչի համար ընդունվում է 25 ու. և տնտեսության համար—75 ուրբլուց վո՛չ պակաս: Այդպիսի շրջարկվող միւնիստր մեծ մասամբ արտոնավորում եր շատ շնչատեր տնտեսություններին, մինչդեռ հենց նման շատ շնչատեր տնտեսությունները ամենից ավելի ունեւոր են լինում: Այս տարի դեպքեր են յեղել, յերբ 20 շնչատեր տնտեսությունները, վորոնց յեկամուտն յեղել է 480 ուրբլի, որենքով չեն յենթարկվել հարկման, մինչդեռ, նը-

բանք կարող էին վճարել՝ թեկուզ մի շնչին գումար:

Ճիշտ է, թեև այստեղ շնչին ընկնում է միայն 24 ս. յեկամուտ, բայց յուրաքանչյուրի համար պարզ է, թե մի տնտեսություն, վորն ունի թեկուզ 20 շունչ, սակայն 480 սուր. յեկամուտ, — վո՛չ մի կերպ չի կարող համարվել բոլորովին չքավոր տնտեսություն: Յեւ իրոք, 480 սուրլի յեկամուտը կարող էր ստացվել միայն այն տնտեսության մեջ, վորը պետք է ունենա վո՛չ պակաս, քան 5-6 դեսյատին վարելահող, 10 դլուխ լծկան ու գրաստ (բեռնատար անասուն), $\frac{1}{2}$ դեսյատին խաղողի այգի, $\frac{1}{2}$ դեսյատին բանջարանոց: Իհարկե, այդ տեսակ տնտեսությունը յերբեք չի կարող ընդունվել վորպես չքավոր:

Խորհրդային իշխանությունը, հրատարակելով 1927-1928 թվի միասնական գյուղատնտեսական հարկի նոր օրենքը, հաշվի չե առել այդ հանդամանքը և ուղղումներ և մտցրել չհարկվող միներմումին վերաբերյալ հարցի մեջ, միաժամանակ շնչատեր և չքավոր տնտեսությունների համար քիչ ավելացնելով արտոնությունները:

Այսպես, անցյալ տարի չհարկվող միներմումը մեկ շնչի և յերկու շնչի համար, նույնիսկ յերեք շնչի համար հավասար էր 75 սուրլու, իսկ այս տարի՝ չհարկվող միներմումը մեկ և յերկու շնչի համար հավասար է 90 սուրլու, իսկ յերեք շնչի համար — նույնիսկ 100 սուրլու:

Այդպիսով, նոր սրենքի սահմանած չհարկվող միևնույն ճանապարհաբուծյուն և ապիս' ավելի ևս արդարացի ձևով հարկել միասնական գյուղատնտեսական հարկով թե՛ սակավունակ, և թե՛ ունևոր տնտեսաբուծյունները:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ, ԿՈԼԼԵԿՏԻՎ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ.

Խորհրդային Միության մեջ համարյա յուրաքանչյուր գավառում կգտնվի թեկուզ մի տնտեսաբուծյուն, վորը մի տիրոջ չի պատկանում, այսինքն՝ կոլլեկտիվ տնտեսաբուծյուն և և պատկանում է մի շարք մարդկանց: Այդ տեսակ տնտեսաբուծյունները կոլլեկտիվ տնտեսաբուծյուններ են, կամ կոոպերատիվ, այսինքն՝ այնպիսի տնտեսաբուծյուններ, վոր առհասարակ մասնավոր տերեր չունեն. Ամբողջովին պետությանը պատկանող (վոչ կոոպերատիվ և վոչ ել կոլլեկտիվ) տնտեսաբուծյուններ են խորհրդային տնտեսաբուծյաւունները: Այդ տեսակ տնտեսաբուծյուններն ավելի րնդունելի չեն խորհրդային յերկրի համար:

Կոլլեկտիվ կամ կոոպերատիվ տնտեսաբուծյունները, (եւ չենք խոսում խորհրդային տնտեսաբուծյունների մասին), մեծացրած-խոշոր տնտեսաբուծյուններ են, վորոնք ավելի կազմակերպված են, այդ պատճառով ել, նրանք ավելի շահավոր, ավելի հարմար են այն տեսակետից, վոր կարող են իբրեւ որինակ ծառայել տնտեսաբուծյունը խելացի, հիմնա-

կան ձեով վարելու համար: Ասինքն՝ աշնակիսի ձեով
վարվող անտեսություն, վորի մեջ ամեն բան համա-
ձայնեցրած է, ամեն բան ամենակազմակերպված
ձեով է, վորտեղ մեքենան է կատարում անհրաժեշտ
ու դժվար աշխատանքի մեծ մասը, վորտեղ հնարա-
վոր է ավելի հեշտությամբ կիրառել հողի մեքենա-
յորեն մշակման կատարելագործված ձևերը, վոր-
տեղ գործադրվում են գյուղատնտեսների խոր-
հուրդները և այլն: Այդ տեսակ անտեսությունները
հանդիսանում են գյուղատնտեսության ցուցադրա-
կան տնկարաններ ապագայի համար: Ուստի, բան-
վորա-գյուղացիական մեր յերկրի շահերը պահան-
ջում են՝ ամեն կերպ աջակցել այդ տեսակ անտե-
սություններին, վորպեսզի դրանք ամրանան ա-
ղարդման, իբրև անտեսություններ, վոր պետք է
որինակ ծառայեն մնացած գյուղացիության հա-
մար:

Այդ պատճառով, հասկանալի չէ, վոր աշն-
ակիսի կողմից կամ կոտակերտով անտեսություն-
ները, վորոնք բարելավում են մեր յերկրի ամբողջ
գյուղատնտեսությունը, ավելի ճիշտ՝ վորոնք
ցույց են տալիս մեր գյուղատնտեսության բարե-
լավման ու զարգացման ուղիները, — հարկվում են
միասնական գյուղատնտեսական հարկով աշնակիսի
հաշվով վորպեսզի նրանց վրա դրվելիք հարկը չա-
փազանց բարձր չլինի:

Ահա թե ինչո՞ւ որենքում նախատեսված է, վոր
խորհրդային ու կոտակերտով անտեսությունների

Համար հարկը հաշվվում է տվյալ շրջանի վերաբերմամբ ընդունված հարկի միջին կապարով, այսինքն՝ յուրաքանչյուր ուսըլուց վերցվում է հենց այնքան կապեկ, վորքան միջին հաշվով, վերցվում է յեկամտի յուրաքանչյուր ուսըլուց այդ շրջանի դյուղացիական առանձին տնտեսություններից:

Բայց միայն սրանք չեն այդ տեսակ տնտեսություններին արված արտոնությունները. համայնական ձևով, առանց կողմնակի բանվորական վարձուութ բանեցնելու հողը մշակող այդ տեսակի տնտեսությունների համար որեւքը հետեյալ արտոնություններն ել է տալիս:

Յեթե կոլլեկտիվ տնտեսության մեջ շնչին ընկնող յեկամուտն տվելի չե, քան տվյալ դավառն առհաստական տնտեսության շնչին ընկնող բնական միջին յեկամուտը, այդ դեպքում, այդպիսի կոլլեկտիվ տնտեսությունն ոգտվում է՝ հաշված հարկի 25 տոկոսի գեղչով: Որինակ, յեթե շնչին ընկնող միջին յեկամուտը տվյալ դավառում, վորտեղ գտնվում է այդ տնտեսությունը, հավասար կլինի 40 ուսըլու, իսկ այդ կոլլեկտիվ տնտեսության մեջ, վոր կիրառվում է հողի համայնական մշակում ե բանվորներ չի վարձում) — շնչին ընկնող յեկամուտը կլինի 30 ուսըլի, այս դեպքում՝ հաշված հարկի յուրաքանչյուր 100 ուսըլուց պակասեցվում է 25 ուսըլի, իբրեւ գեղչ, այդ տեսակ տնտեսությունը խրախուսած լինելու համար:

Սակայն մեր որեւքն դրանով ել չի բավական

նանում և իր խրախուսանքի մեջ ավելի առաջ և
դնում: Յեթե պարզվում և, վոր կոլլեկտիվ տնտե-
սության մեջ, — շնորհիվ այդ կոլլեկտիվ անդամ-
ների յեռանդի, շնորհիվ կոլլեկտիվ տնտեսությու-
նը բարձրացնելու և ամրացնելու համար նրանց
գործ դրած ջանքերի — շնչին ընկնող յեկամուան
ստացվում և ավելի, քան տնտեսական տնտեսու-
թյունների շնչին ընկնող յեկամուար, այդ դեպքում,
նրանց շնչին ընկնող յեկամուարից հասանելիք հարկը
հաշվվում և վո՛չ ավելի, քան ավյալ գավառի տ-
նանձին տնտեսություններում շնչին ընկնող միջին
յեկամուարից և, միաժամանակ հաշվված հարկի գու-
մարից դարձյալ 25 տոկոս զեղջ և արվում:

Որինակ, յեթե մի գավառում շնչին ընկնող յե-
կամուար 40 ուրբլի յե, իսկ կոլլեկտիվ տնտեսու-
թյան մեջ շնչին ընկնող յեկամուար այդ գավառում
հավասար և 60 ուրբլու, հապա համենայն դեպս՝
հարկը հաշվվում և ավյալ գավառի միջին յեկամուի
նորմայով, այսինքն՝ շնչին 40 ո. և յեկամուի ավել-
յուկ 20 ուրբլին չի յենթարկվում հարկման:

Դրա հետ մեկտեղ՝ այդպես պակաս հաշվված
հարկից ել զեղջ և արվում՝ հարկի յուրաքանչյուր
ուրբլուց 25 կոպեկի չափով:

Իսկ կոոպերատիվ տնտեսությունները, վորոնք
կիրառում են հողի համայնական մշակում՝ առանց
վարձու բանվորների, ստանում են իրենց վրա հաշ-
ված հարկի համար միայն 10 տոկոս զեղջ, այ-
սինքն՝ հարկի յուրաքանչյուր 10 ուրբլուց 1 ուրբ-
լի զեղջ:

Այդպես է Բանվորա-Փյունդադակա՛ն իշխանու-
թյունը խնամք տանում այն գյուղական անտեսու-
թյունների մասին, վորոնք աշխատում են կուլլեկ-
տիվորեն, ընդհանուր ուժերով հիմնել լավ կազմա-
կերպոված համայնական անտեսու թյուններ:

ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՇՈՂԵՐԸ.

Վարպետի վերջացնենք հարկը հաշվելու հար-
ցը, մենք պետք է տեսնենք դեռ, թե ինչպես է
հաշվվում վարձակալված հողերի յեկամուտն ու
հարկը: Այստեղ որենքը տալիս է վարձակալված
հողերի համար զեղչ անելու ընդհանուր կարգը և
տեղական իշխանություններին և թողնում--սահ-
մանել իրենց հանրապետության համար այդ զեղ-
չերը կիրառելու մանրամասն կանոնները:

Որենքում ասված է, թե վարձակալված հողե-
րի յեկամուտը, վոր հաշվված է ընդհանուր կանոնի
համաձայն, պակասեցվում է 10-ից մինչև 25 տո-
կոսով: Դա նշանակում է, վոր մի դեպքատին վա-
րելահողի յեկամուտը, հանրապետության ժող-
կամխորհի հայեցողությամբ, կարող է համարվել,
վարձակալության դեպքում, վոչ թե 30 ուր., այլ
27 ուրքի, կամ մինչև անգամ՝ 22 ուրք. 50 կոպ-
րայց վորովհետև յուրաքանչյուր հանրապետու-
թյան մեջ հողի վարձակալության վճարը կարող
տարբեր լինել, հետևապես զեղչի տոկոսն էլ վար-
ձակալված հողերի համար կարող է տարբեր լի-
նել:

Ահա թե ինչու մենք այժմ այս գրքույկում չենք
կարող ճիշտ ցույց տալ, թե վոր հանրապետության
մեջ, վոր գաղափարով վորքան գեղջ կարող է սահ-
մանվել--10, 15, 20 թե՞ 25 տոկոս, բայց համե-
նայն դեպս, 10 տոկոսից վոչ պակաս, այսինքն $\frac{1}{10}$
մասը, և 25 տոկոսից վոչ ավելի, այսինքն՝ $\frac{1}{4}$
մասը:

Սակայն դրանով չեն սահմանափակվում այն
արտոնություններն ու գեղջերը, վոր սրենքով նա-
խատեսված են գյուղական բոլոր անտեսություն-
ների համար: Բացի կոտակերտով ու կալլեկով
անտեսություններին արված արտոնություններից
և գեղջերից, կանոնադրությունը չափ արտոնու-
թյուններ է տալիս նաև կարմիր բանակայինների
անտեսություններին, հաշմանդամների անտեսու-
թյուններին, արատություններ է տալիս տարերա-
յին աղետների դեպքում և այլն, վորոնք մենք
պետք է քննենք առանձին-առանձին:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Միասնական գյուղատնտեսական հարկը, իր
քաղաքական նշանակությամբ և հարկատուների
քանակությամբ, լինելով Խորհրդային կոստավո-
րության կարևորագույն հարկերից մեկը ընդհա-
նուր հարկային սխեմայի մեջ, թե ընդհանուր քա-
ղաքական նշանակություն ունեցող, և թե խրա-
խուսանքի բնույթ կրող մի շարք արտոնություն-

ներ և նախատեսեալով, վորոնց նախատակն և—աջակցել զյուզատնտեսության հետագա զարգացմանը:

Նոր սրենքում ել, ինչպես և հնում, ցույց են տալիս թոյր տրտնությունները, վոր բաժանվում են չորս խմբակի.

1. Արտնություններ կարմիր բանակայիներ ի տնտեսություններին:
2. Խրախուսանքի բնույթ կրող արտնություններ:
3. Տարերային տղեաներին վերաբերյալ արտնություններ:
4. Զանազան արտնություններ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր սրենքով, անցյալ տարվա նման, հարկը հաշվելու համար՝ շնչերի հաշվառքը կատարելիս, նրանց թվի մեջ են առնվում տնտեսության կազմի մեջ մտնող՝ շարքային և հրամանատարական կազմի գլխավորական ծառայողները (հրամանատարական, վարչական, քաղաքական, բժշկական ու տնտեսարուժական), վորոնք գտնվում են Բանվորա-Պյուղացիական կարմիր Բանակի բնակազմի մշտական ծառայության, ինչպես նաև Միացյալ Պետական Քաղաքական վարչության զորամասերի և պահակախմբերի մեջ, հաշվելով նաև նրանց, վորոնք կանչված են Բանվորա-Պյուղացիական կարմիր Բանակի բնակազմի մեջ՝ հարկման տարվա աշ-

նանը, նախագորակոչային կամ արագորային պարապմունքները և վարժական հավաքները զեկավարելու համար՝ վորպես հրահանգիչներ, 1927 թվի մարտի մեկից հետո Բանվորա-Փյունդացիական կարմիր Բանակի բնակազմի մշտական ծառայությունից բոլորովին արձակուրդ ստացած, պահետի մեջ անցած, կամ ծառայությունից բոլորովին արձակված անձինք. պատերազմի և աշխատանքի հաշմանդամները, վորոնք պատկանում են հաշմանդամության 1-ին, 2-րդ ու 3-րդ խմբակներին:

Որինակ 1. № 1 տնտեսությունն ունի 4 շունչ, 4 դեսյատին վարելահող, 1 դեսյատին բանջարանոց, 4 գուխ լծկան և պետք է վճարի 30 ռուբ. 72 կոպ. հարկ: Բայց յեթե այս տնտեսությունն ունի զինվորական ծառայության մեջ կարմիր բանակային, այդ դեպքում՝ շնչերի թվին ավելանում և հիշյալ կարմիր բանակայինը, և ընտանիքի կազմը համարվում է վոչ թե 4 հոգուց բաղկացած, այլ 5. այն ժամանակ այն տնտեսությունը վճարում է վոչ թե 30 ռուբ. 72 կոպ. հարկ, այլ 22 ռուբ. 08 կոպ.:

Կարմիր բանակայինին մտցնելով տնտեսության շնչերի թվի մեջ, թեթևանում է նրա համար հարկման ծանրությունը:

Նորհրդային իշխանությունը միայն այդ մի արտոնությամբ չի բավականացել: Վերոհիշյալ տնտեսությունների համար չհարկվող մինիմումը սահմանված է կրկնակի չափով, այսինքն՝ շնչի համար 60 ռուբլի, իսկ տնտեսության համար—180

նուբլուց վո'չ պկաս: Որենքում ասված է, թե այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում են վերևում թված անձինք, ստանում են նաև հետևյալ արտոնություններն միասնական գյուղհարկի վերաբերմամբ:

ա) Այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում է գերակետիկ ծառայության կրտսեր հրամանատարական կազմին պատկանող անձինք, 1) բոլորովին ազատվում են հարկից, յեթե տնտեսության հարկի յենթակա յեկամուտը չի գերազանցում չհարկվող մինիմումի կրկնապատիկը: 2) ազատվում են հարկի կեսից, յեթե հարկվող յեկամուտը գերազանցում է չհարկվող մինիմումի կրկնապատիկը և 3) ազատվում են հարկի յերեք քառորդից, յեթե տնտեսությունը բացի բանակայինից չունի ուրիշ աշխատունակ տղամարդիկ:

Որինակ 2. — № 3 տնտեսությունն ունի 2 շունչ, 2 դեսյատին վարելահող, $\frac{1}{4}$ դեսյատին բանջարանոց և 2 գլուխ լծկան: Այս տնտեսության ամբողջ յեկամուտը կազմում է 131 ուբլի:

Վորովհետ 2 շունչ ունեցող տնտեսության համար չհարկվող մինիմումը սահմանված է 90 ուբլ., հետևապես, № 3 տնտեսությունը յենթակա յե հարկման և վճարում է 10 ուբլ. 11 կոպ. հարկ:

Բայց յեթե այս տնտեսության կազմի մեջ կա գերակետիկ ծառայության կրտսեր հրամանատարական կազմին պատկանող անձ, այդ դեպքում՝ տնտեսությունը բոլորովին ազատվում է հարկից,

վորովհետև, որենքով նա կարող է հարկվել միայն
այն ժամանակ, յերբ նրա յեկամուտն ավելի չե 180
սուբյուց:

Որինակ 3.—№ 5 տնտեսությունն ունի 3 շունչ,
3 դեսյատին վարելահող, մի դեսյատին բանջա-
րանոց և 2 գլուխ լծկան:

Այս տնտեսության ամբողջ յեկամուտը կազ-
մում է 256 սուբյու, և նա վճարելու է 27 սուբ— 98
կոպ. հարկ: Բայց յեթե այս տնտեսության կազմի
մեջ կա գերակետիկ ծառայության կրտսեր հրա-
մանատարական կազմին պատկանող անձ, այդ դեպ-
քում՝ տնտեսությունը 27 ս. 98 կ. հարկի փոխա-
րեն վճարում է դրա կեսը, այսինքն՝ 13 ս. 99 կո-
պեկ, վորովհետև այդ տնտեսության հարկի յեն-
թակա յեկամուտը—256 սուբյու—գերազանցում է
չհարկվող մինիմումի կրկնապատիկը, այսինքն 180
սուբ.

Որինակ 4.—№ 6 տնտեսությունն ունի 5 շունչ,
4 դեսյատին վարելահող, $\frac{1}{2}$ դես. բանջարանոց,
 $\frac{1}{2}$ դես. խաղողի այգի և 4 գլուխ լծկան: Նա վճա-
րելու չե 28 սուբ. 32 կոպ. հարկ: Բայց յեթե այս
տնտեսության կազմի մեջ մտնում է գերագետիկ
ծառայության կրտսեր հրամանատարական կազմին
պատկանող անձ, և տնտեսության մեջ չկան ուրիշ
աշխատունակ տղամարդիկ, այդ դեպքում՝ նա 28
սուբ. 32 կոպ. հարկի փոխարեն վճարում է միայն
7 սուբ. 08 կոպ.:

բ) Այն տնտեսությունները, վորանց մեջ միա-

նում են մեր թված մնացած անձինք, բայց դերա-
կետիկ ծառայության կրտսեր կազմին պատկանող
անձերից, ազատվում են՝ 1) հարկի յերեք քառոր-
դից, յեթե տնտեսության հարկվելու յենթակա յե-
կամուտը չի գերազանցում չհարկվող միևիմումի
կրկնապատիկը, 2) հարկի մի քառորդից, յեթե
հարկվող յեկամուտը գերազանցում է չհարկվող
միևիմումի կրկնապատիկը և 3) հարկի կեսից, յեթե
տնտեսության մեջ չկան ուրիշ աշխատունակ ազա-
մարդիկ:

Որինակ 5.—№ 7 տնտեսությունն ունի 3 շունչ,
3 դեսյատին վարելահող, $\frac{1}{4}$ դեսյատին խաղողի
այգի և 2 գլուխ լծկան: Տնտեսության ամբողջ յե-
կամուտան է—166 ուրբլի:

Վորովհետև յերեք շունչ ունեցող տնտեսու-
թյունների համար չհարկվող միևիմումը սահման-
ված է մինչև 100 ուրբլի, հետևապես, այս տնտե-
սությունը յենթակա յե հարկման և վճարում է 9
ուրբլի 32 կոպեկ: Բայց յեթե այս տնտեսության
կազմի մեջ կա Կարմիր բանակային, կամ պատե-
րազմի ու աշխատանքի հաշմանդամ, այդ դեպքում՝
տնտեսությունը վճարում է միայն 2 ու 33 կ.,
հարկ, փոխանակ 9 ու 32 կոպեկի:

Որինակ 6.—№ 8 տնտեսությունն ունի 3 շունչ,
3 դես. վարելահող, $\frac{1}{2}$ դես. խաղողի այգի, $\frac{1}{4}$ դես.
բանջարանոց և 2 գլուխ լծական: Այս տնտեսու-
թյան ամբողջ յեկամուտը կազմում է 251 ուրբ., և
տնտեսությունը պետք է վճարի 26 ուրբ. 83 կոպ.

հարկ: Բայց յեթե այս տնտեսութեան կազմի մեջ
կա կարմիր բանակային կամ պատերազմի և կամ
աշխատանքի հաշմանդամ, այդ դեպքում՝ նա վճա-
րում է միայն հարկի յերեք քառորդը, այսինքն՝
20 ռուբ. 12 կոպ. միայն, փոխանակ 26 ռ. 83 կ.,
վորովհետև այս տնտեսութեան հարկի յենթակա
յեկամուտը—25 ռուբլի—գերազանցում է չհարկ-
վող մինիմումի կրկնապատիկը, այսինքն՝ 180 ռ.:

Որինակ 7.—№ 9 տնտեսութեանն ունի 5 շունչ,
1 դես. վարելահող և $\frac{1}{2}$ դես. խաղողի այգի: Նա
վճարելու յե 12 ռուբ. 20 կոպ. հարկ: Բայց յեթե
այս տնտեսութեան կազմի մեջ կա կարմիր բանա-
կային կամ պատերազմի և կամ աշխատանքի հաշ-
մանդամ, և տնտեսութեանը շունի ուրիշ աշխա-
տունակ տղամարդ, բացի ծառայութեան մեջ
գտնվող կարմիր բանակայինից, այդ դեպքում, նա
12 ռ. 20 կոպ. հարկի փոխարեն վճարում է կեսը,
այսինքն՝ 6 ռուբ. 10 կոպ.:

Յեթե տնտեսութեան մեջ կա՝ թե կարմիր բա-
նակային և թե աշխատանքի հաշմանդամ,—ար-
տեսութեանը տրվում է և՛ մեկին, և՛ մյուսին:

դ) Այն տնտեսութեանները, վորոնց կազմի մեջ
մտնում են սևուցման և վարժական հավաքների
կանչված տերիտորիալ (յերկրային) զորամասերի
փոփոխական կազմին պատկանող անիճնք, միաս-
նական գյուղատնտեսական հարկը կարող են վճա-
րել՝ հիշյալ անձանց հավաքներից վերադառնալու
մոմենտից մեկ ամիս հետո, ըստ վորում, այդ ժա-
մանակի համար տույժ չեն վճարում:

դ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանա-
կի բնակազմից յերկարատե արձակուրդ ստացած,
պահեստի մեջ մտած կամ ծառայությունից բոլո-
րովին ազատված անձնավորությունների կազմա-
կերպած կոլլեկտիվ տնտեսությունները բոլորովին
ազատվում են հարկից, յեթե՝ ա) կոլլեկտիվի կազ-
մակերպության որից անցել է վոչ ավելի, քան
յերկու տարի. բ) յեթե կոլլեկտիվը կազմակերպ-
ված է այդ անձնավորությունների Բան.-Գյուղ.
Կարմիր Բանակից ազատվելու առաջին տարվա ըն-
թացքում. գ) յեթե այդ անձանց թիվը կոլլեկտի-
վի աշխատունակ անդամների ընդհանուր թվի կե-
սից պակաս չէ:

Կարմիր բանակայիներին տնտեսությունները,
մեր նշած այս բոլոր արտոնություններից զատ,
ոգտվում են նաև բոլոր այն արտոնություններից,
վոր որենքը սահմանել է գյուղական մյուս բոլոր
տնտեսությունների համար:

ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԲՆՈՒՅԹ ԿՐՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր պետությունը շահագրգռված է գյուղա-
տնտեսության հետագա զարգացմամբ, և առաջին
հերթին՝ տեխնիկական մշակույթների զարգաց-
մամբ:

Կառավարությունը ձեռք է առնում մի շարք՝
խրախուսանքի բնույթ կրող միջոցներ, ինչպես
որինակ—գյուղացիությանը փոխատվություն,
կանխավճար տալը, սերմեր ու բուժական նյութեր
մատակարարելը և այլն:

Միանական գյուղատնտեսական հարկի նոր
որենքն այդ ուղղությամբ տալիս և հետևյալ ար-
տեսությունները .

1. Հարկից ազատվում են՝

ա) ամբողջովին—պետական կամ տեղական
բյուջեյով պահվող փորձնական, փորձա-ցուցադրա-
կան, սեւեկցիոն, սերմային և անասնաբուժական
կայանների, ագնվացեղ կենդանիներ պահող տնտե-
սությունների ու ձիաբուծարանների յեկամուտ-
ները .

բ) փորձնական և փորձա-ցուցադրական տըն-
տեսությունների, գյուղատնտեսական գիտական և
ուսումնական հաստատությունների յեկամուտ-
ները .

գ) դպրոցների, մանկական հիմնարկների, ար-
գելատեղերի (սրանց թվում և ազատությունից
զրկվածների աշխատանքային պաղութների), ինչ-
պես նաև պետական, հասարակական և պրոֆեսիո-
նալ հիմնարկությունների ու կազմակերպություն-
ների հաշվին պահող բժշկական հաստատություն-
ների տնտեսությունների յեկամուտները .

դ) գիտական-ցուցադրական նշանակություն
ունեցող կամ լուսավորության ժողովրդական կո-
միտարիատների մարմինների կուլտուր-կրթական
հաստատությունների պարենավորմանը ծառայող
հասարակական ցանքերի յեկամուտները .

ե) շրջանային ֆոնդերից զատված և գյուղա-
տնտեսական փոխադարձ ոգնության ընկերու-

թյունների ու դրանց համապատասխանող կազմակերպությունների կողմից իրենց նպատակների համար ոգտագործվող հողամասերի վրա կատարված հասարակական ցանքերի յեկամուտները.

դ) գյուղական համայնքների համախոսակա-նով համայնական Փոնդից զատված հողամասերի վրա՝ անձեռնմխելի սերմի պաշար տնտեսելու նպատակով՝ հասարակության հաշվին կատարված ցանքերի յեկամուտները.

ը) համայնական Փոնդից, կամ պետական հողային գույքից, գուգավորման նպատակով ոգտագործվող համայնական արտագրողների (անասունների) համար հատկացված խոտհարքների յեկամուտը՝ ամեն մի գլխին 3 գեսյատինի սահմաններում:

2. Դաշտամշակության և գյուղատնտեսության հատուկ ճյուղերի յեկամուտները հարկի յենթարկելիս, հաշվի չեն առնվում և չեն հարկվում՝

ա) անհարմար հողերը, յեթե սրանք մեկխորացիայի (վտոգման) յեն յենթարկվում, ինչպես նաև արհեստական խոնավացման յեթարկված և պատնեշված այն հողերը, վորոնք առաջ չեյին մտնում հարկման յենթակա տարածության մեջ, նրանց վրա՝ հողոգտագործողների միջոցներով կատարվող մեկխորատիվ աշխատանքներն ավարտելուց հետո, յերեք տարվա ընթացքում.

բ) այն տարածությունները, վորոնց վրա հարկման նախընթաց տարին՝ ցանքի և խոտհարքի

համար կատարվել է համահամաժամանակաբար կոճղահանութիւն.

դ) նոր պողատու ծառատանները՝ հետեյալ հասակում—հատիկավոր տեսակի ծառերի համար (խնձորի, տանձի)՝ տնկելու որից մինչև տասը տարի, կորիզավորների համար (սալորի, բալի, դեղձի և այլն)՝ մինչև վեց տարի և պողատու թփուկների համար՝ մինչև յերեք տարի.

դ) պողատու ծառերի և խաղողի նոր տնկարանները, տնկելու որից սկսած չորս տարվա ընթացքում.

ե) նորատունկ խաղողի այգիները և արմատից կտրելու միջոցով յերիտասարդացվող խաղողի այգիները—տնկելուց ու յերիտասարդացումից հետո հինգ տարվա ընթացքում. գյուղատնտեսական այլ մշակույթների համար անպետք, ավաղոտ և քարքարոտ հողերի վրա տնկվող խաղողի այգիները—տնկելուց հետո վեց տարվա ընթացքում. ֆիլոքսերայի դիմացող պատվաստակալների վրա տնկվող խաղողի այգիները—տնկելուց հետո յոթ տարվա ընթացքում.

զ) ցանովի խոտերի սերմաբուծարանները.

ը) գենագերչակի ցանքերը.

թ) կենաֆի ցանքերը:

Վերջապես մեր կենտրոնական կառավարութեան վերջին վորոշումով՝ գյուղական տնտեսութիւններին տրված է ելի մի արտոնութիւն, վոր միանգամայն առանձնահատուկ բնույթ ունի:

Բանն այն է, վրո Խորհրդային Միության մեջ, շնորհիվ այն ավերածության, վորն սկսվեց 1914 թվի համաշխարհային պատերազմի ժամանակից և վորից մենք այնպիսի դժվարությամբ աշխատում ենք մինչև այսօր ազատվել, — շատ ընտանիքներ վերջնականապես քայքայվել են, շատերը վռնչացել են և դրա հետևանքով՝ փողոց ելին նետվել բազմաթիվ մանկահասակ երեխաներ։ Անապատան փոքրիկների թիվն առանձնապես մեծացավ այն սարսափելի սովից հետո, վորին յենթարկվեց Խորհրդային Ռուսաստանը 1921 թվին։

Խորհրդային իշխանությունն ամեն տեսակ ջանք է գործ դնում, վորպեսզի մի կերպ ազատի սովամահությունից հազարավոր երեխաներ, վորպեսզի հնարավորություն տա նրանց՝ մի կերպ տեղավորելու վորևէ տնտեսության մեջ, վորևէ գյուղում, և աշխատում է նրանցից պատրաստել խորհրդային հանրապետության ազնիվ քաղաքացիներ։

Բայց ամենքին հայտնի չէ, վոր այն ծանր դրությամբ, միջոցների այն սղութամբ, վորպիսին զգացվում է այժմ Խորհրդային Միության մեջ, — անհնարին է պետության հաշվին կերակրել և հագցնել անապատանների այս մասսան։

Բայց և միևնույն ժամանակ, այդ անապատան երեխաներից շատերը կարող ելին աշխատանք գտնել գյուղում, առանց բեռ դառնալու գյուղական ընտանիքի համար։ Յեվ իրոք գյուղական տրնտեսություններից շատերն իրենց մոտ են վերցնում

այգալիսի անապատաւան յերեխաների, ստանում են նրանց համար հողաբաժին, մտցնում նրանց իրենց անտեսութեան մեջ և դրանով շատ անապատաւանների հանում են այն ծանր դրութեանից, փորի մեջ գտնվում են նրանք, ապրելով քաղաքի փողոցներում, — իսկ յերբեմն ևլ սեղդակի տղատում են սովամահից :

Իսկ վարպետի աւանձին անապատաւան յերեխաներ իրենց ծախութեամբ քեռ չ շտանան գյուղական անտեսութեան գլխին, նրանց բաժանում են գյուղական ծխերի միջև մանկատների միջոցով. աչքինքն՝ յուրաքանչյուր գյուղացի կարող և մանկատանից վերցնել այգալիսի մի սան՝ և միայն մանկատներից վերցրած սաների համար գյուղական անտեսութեանը հողաբաժին և տրվում :

Սորհրդային իշխանութեանն այդ բանն ևլ և հաշվի առել : Այդ պատճառով, գյուղատնտեսական հարկի Կանոնադրութեանը տվել և հետեյալ արտոնութեանը. լրացուցիչ շնչապատկան այն հողաբաժինները, փորոնք տրվում են գյուղական ծխերին վերոհիշյալ սաների համար, ազատվում են գյուղատնտեսական հարկից յերեք տարվա ընթացքում՝ հողաբաժինները նրանց հատկացնելու օրից :

3. Ազնվացեղ կենդանիների զարգացման գործը խրախուսելու նպատակով, անասունների յեկամուտների հարկը սահմանելիս, հարկման չեն յենթարկվում՝

ա) հողային մարմինների համանութեանը

դատած արտադրող ցույցերը.

բ) պետական մատյաններում տամարագրված խոշոր յեղջյուրավոր ազնվացեղ տնտեսուհիները.

գ) պետական մատյաններում տամարագրված ազնվացեղ զամբիկները և հովատակները.

դ) հողային մարմինների մատյաններում տամարագրված սեամորթ բուխարական վոչխարները.

ե) մերինոս վոչխարները.

զ) բուծարանների ազնվացեղ բոլոր տեսակի վոչխարները՝ նրբամազ, կիսակոշտաբուրդ և կոշտաբուրդ.

ը) հողային մարմինների մատյաններում տամարագրված հասարակական բեղմնավորման կայաններում գտնվող ազնվացեղ վարազները.

թ) հողային մարմինների մատյաններում տամարագրված խոզաբուծարանների ազնվացեղ խոզերը:

Ձիաբուծական ընկերություններին, խմբական և անհատական այն տնտեսություններին, — վորոնք գաշնակից հանրապետությունների հողագործության ժողկոմատների հետ կնքած տիպիկ պայմանագրերով՝ իրենց հատկացրած հողամասերի վրա յերամնեքով աճեցնում են սաղմանորոգ ընտիր հեծկան ձիեր, — միասնական գյուղատնտեսական հարկի նկատմամբ առաջին յերեք տարվա ընթացքում տրվում են հետեյալ արտոնությունները.

ա) հարկից ազատվում են հողային մարմինների մատյաններում տամարագրված ազնվացեղ

կազմ ունեցող յերամականերից, ինչպես նաև սաղմական վարչությանը հանձնվելիք կամ արտադրողներին յերամակում թողնվող աճեքի յեկամությունները:

բ) հարկից ազատվում են ամեն մի ձիու համար (զամբիկ, հովատակ և մեկ տարուց մեծ մատղաշ) 3-ական դեսյատին չափով խոտհարքի ու արոտատեղերի յեկամությունները:

5. Հողաչինարարության և նոր վայրեր տեղափոխվելու կանոնների կարգով տեղափոխվող աշխատավոր հողագտագործողների և նրանց միությունների (արտելների, կոմունաների, ընկերությունների) տնտեսություններին միասնական գյուղատնտեսական հարկի նկատմամբ տրվում են հետևյալ արտոնությունները.

ա) այն տնտեսությունները, -- վորոնք գաղթել և վերաբնակվել են այնպիսի վայրերում, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար՝ հողագործերը ստիպված են մշակելի հողեր պատրաստել կոճղահանության, ջրաչինարարական և այլ աշխատանքների միջոցով, ազատվում են հարկից՝ տեղավորման ժամանակից սկսած առաջին հինգ տարվա ընթացքում:

բ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել և վերաբնակվել են այնպիսի վայրերում, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է խամ հողերի մշակումն կամ հողագործության կատարելագործված ձևերի կիրարկում (խո-

տաբույսերի և շարքա՜հերկ մշակույթների մի-
ջոցով բազմադաշտային ցանքաչրջանառություն
իսկ չորային շրջաններում՝ յերաշտի դիմացող
բույսերի, սելեկցիոն (ընտրովի, աղնիվ տեսակի)
սերմերի ցանքեր), հարկից ազատվում են՝ հող-
ոգտագործման անցնելու ժամանակից հաշված,
մեկ տարվա ընթացքում:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Պորհրդային իշխանությունը, ըստ ամենայնի
պաշտպանելով աշխատավորական գյուղացիական
տնտեսությունների շահերը և հաշվի առնելով, վոր
ներանց կարող է տարերայի աղետ պատահել, ինչ-
պես որինակ՝ կարկտահարություն, հեղեղումներ,
հրդեհ, ցանքի վոչնչացումն, յերաշտ, անասունի
սատկելը և այլն, — որենքում նշել է, թե այն տըն-
տեսությունները, վորոնք տուժել են տարերային
աղետներից, գավառային Հարկային Հանձնաժո-
ղովների կողմից, ազատվում են հարկից լրիվ կամ
մասամբ՝ նայած տնտեսության կրած ընդհանուր
վնասի չափին և նրա կարողությանը:

ԶԱՆԱԶԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Իրենց ծառայության պարտականությունները
կատարելիս, կամ դրա հետ կապված դեպքում՝ ըս-
տանված անտառային պաշտոնյաների այրիներին և
աչափահաս զավակներին պատկանող աշխատավո-
րական գյուղացիական տնտեսությունները հիշյալ

պաշտոնյաների մահից հետո, հինգ տարվա ընթաց-
քում, ազատվում են միասնական գյուղատնտեսա-
կան հարկից:

ԲՈՂՈՔՆԵՐ ՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առանձին գյուղական տնտեսություններ մի-
ասնական գյուղատնտեսական հարկով հարկելիս,
սխալներ կարող են լինել: Կարող է պատահել, վոր
յեկամտի աղբյուրների և շնչերի հաշվառքը, կամ
յեկամուսի գումարը և հարկի հաշիվը սխալ ար-
ված լինի, և կամ որենքով տրված արտոնություն-
ներն ու գեղջերը գործադրված չլինեն (սխալմամբ
կամ անգիտությամբ):

Անհրաժեշտ է՝ սխալը հայտնաբերելիս և, հա-
մենայն դեպս, վճռել, քան հարկաթերթն ստա-
նալու որից մեկ ամսվա ընթացքում, բողոք տալ
կամ միջնորդություն հարուցել գավառակային
Փորձկոմում, բողոքի մեջ նկարագրելով բոլոր հան-
գամանքները և մանրամասն ցույց տալով, թե ին-
չո՞ւմ և կայանում բողոքը կամ միջնորդությունը:

Յեթե Գավառակային Փորձկոմին տված բո-
ղոքը կամ միջնորդությունը չի բավարարվի, յու-
րաքանչյուր գյուղացիական տնտեսություն իրա-
վունք ունի, Գավառակային Փորձկոմի միջոցով,
բողոք ներկայացնել Գավառական Հարկային Հանձ-
նաժողովի:

Ելականն այն է, վորպեսզի բողոքն ու միջնոր-
դությունը արվին իր ժամանակին:

Տարերային աղետների հետևանքով արտոնություններ ու զեղչ ստանալու մասին միջնորդությունները տրվում են նույն կարգով, աղետից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Որինական արտոնությունները կամ զեղչն ստանալու համար չպետք է անցկացնել սահմանված մի ամսվա ժամկետը:

ՀԱՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

Անդրկովկասյան Կառավարությունը հարկը վճարելու ժամկետները վերաչելիա՝ նկատի չե ունեցել այն ժամանակաշրջանները, յերբ գյուղացիությունը ծախում է իր գյուղատնտեսության մթերքները և հնարավորություն ունի՝ առանց զժվարության, մուծելու իրենից պահանջվող հարկը:

Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի համար հարկը վճարելու առաջին ժամկետը նշանակված է 1927 թվի նոյեմբերի 1-ը, յերբ պետք է անպայման վճարվի գանձվելիք հարկի ամբողջ գումարի 25 տոկոսը: Աբխազիայի համար—1928 թվի հունվարի 1-ը—15 տոկոս:

Յերկրորդ ժամկետը սահմանված է 1928 թվի հունվարի 1-ը, յերբ պետք է վճարվի գանձվելիք հարկի ամբողջ գումարի 50 տոկոսը: Աբխազիայի համար—1928 թվի մարտի 1-ը 50 տոկոս:

Յերրորդ ժամկետն է—1928 թվի փետրվարի 1-ը, յերբ պետք է վճարվի մնացած 25 տոկոսը:

Աբխազիայի համար—1928 թվի ապրիլի 1-ը
—35 տոկոս:

Աբխազիայի համար վճարման ժամկետները
դատած ու առանձնացրած են այն պատճառով, վոր
այնտեղ գյուղացիութիւնը մեծ մասամբ հարկը
վճարում է ի հաշիվ ծխախոտի վճառքի, վորն
սկսվում է հունվար ամսից:

ՀԱՐԿԸ ԳԱՆՁՈՂ ԱՊԱՐԱՏԸ ՅԵՎ ՀԱՐԿԸ ԳԱՆՁԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Բանվորա-Գյուղացիական Կառավարութիւնը,
ամեն կերպ ձգտում է՝ մի կողմից, հարկահաւաք
ապարատը մոտեցնել գյուղացիութեանը և, մյուս
կողմից՝ գյուղատնտեսական հարկին վերաբերյալ
ամբողջ աշխատանքն ու պատասխանատվութիւնը
դնել գյուղացիութեան կողմից ընտրված տեղական
իշխանութեան վրա: Այդ նպատակով ել որենքում
աւանդ է.—

ա) հարկը վճարողների գյուղական ցուցակնե-
րը կազմելու, յուրաքանչյուր տնտեսութեան յեկա-
մաթի աղբյուրներն ու շնչերը հաշվելու, ինչպէս նաև
հարկատուներին հարկաթերթեր հանձնելու պար-
տականութիւնները դրվում են գյուղական խոր-
հուրդների վրա, վորոնք աշխատելու յեն գավառա-
կային (թեմի-գայրայի) Գործադիր Կոմիտեների
դեկավարութեամբ:

Այդպիսով, ամբողջ գլխավոր աշխատանքը,—

վորի հիման վրա հաշվվում է հարկը, — կատարվում է տեղերում, և յուրաքանչյուր գյուղական տնտեսություն հնարավորություն ունի՝ ախտիվորեն մասնակցելու նրան:

բ) Հանրապետությունների ժողովոմխորհների հայեցողությամբ, գավառակային (թեմի-դայրայի) Գործադիր կոմիտեների վրա կարող են դրվել հետևյալ աշխատանքները՝

Հարկատուների հարկվող յեկամուտն ու հարկը հաշվելը, հարկաթերթեր կազմելը, հարկի վճարումներն ընդունելը, ավելի վճարված հարկը վերադարձնելը կամ հաշվակցելը, ինչպես նաև հարկի գանձման ընդհանուր հսկողությունն ու ղեկավարությունը:

Յուրաքանչյուր գավառակային (թեմի-դայրայի) Գործադիր կոմիտեյին կից կազմվում են հարկային հանձնաժողովներ՝ հետևյալ կազմով. գավառակային (թեմի-դայրայի) գործկոմի Ֆինհարկային մասի վարիչը, գավառակային (թեմի-դայրայի) Գործկոմի հողային բաժնի վարիչը, գավառակային (թեմի-դայրայի) պրոֆեսիոնալ կազմակերպությունների ներկայացուցիչը, գավառակային (թեմի-դայրայի) փոխադարձ սպասարկության գյուղացիական կոմիտեյի ներկայացուցիչը, ինչպես նաև գյուղի ներկայացուցիչը, վորին ընտրվում են գյուղական ժողովում տվյալ հարկային տարվա համար՝ մասնակցելու համար համապատասխան գյուղերի գործերի քննությանը:

Այդ հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) առանձին չքափոր տնտեսությունների վա՛չ դյուցապանատեսական վաստակներն ազատել հարկից այն դեպքում, յերբ այդ իրավունքը նրանց պահված կլինի հանրապետությունների ժողովո՞ւթարհների կողմից:

բ) վորոշել անհատական և կոլլեկտիվ տնտեսությունների վա՛չ դյուցապանատեսական վաստակներից ստացած յեկամա՞ի չափը.

գ) բնական աղետներից սու՞թած տնտեսությունները բոլորովին կամ մասնակի կերպով ազատել հարկից.

դ) լուծել արտոնություններ տալու մասին հարկատուների արած միջնորդությունները.

ե) լուծել անհատական տնտեսությունների բողոքները՝ յեկամա՞ի աղբյուրների սխալ հաշվաման, յեկամա՞ի գումարներն ու հարկի չափը սխալ հաշվելու և արտոնությունները սխալ կիրառելու մասին:

Նոր որենքում նշված և, թե հանձնաժողովի անդամ այն դյուցապիք, վորոնք ընտրված են դյուցական ժողովներում՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, վարձատրությունն են ստանում այն չափով, ինչ վոր կր սահմանեն հանրապետությունների ժողովրդական կոմիտեների թորհուրդները:

Մեր Կառավարութիւնն այս կարգը մայրել և
այն նպատակով, վարպետի վարձատրվի հանձնա-
թողովի անդամ—գյուղացու աշխատանքէ, վորը նա
կատարում է հանձնաթողովի նիստերին մասնակցե-
լով:

Պետք է հուսալ, վոր հանձնաթողովի անդամ
ընտրված գյուղացիք կանոնավոր կերպով կհանձնա-
խեն նիստերին, վորը հնարավորութիւն կտա ավելի
ուղիղ վճուելու իրենց համագյուղացիների գոր-
ծերը:

Գալատական յուրաքանչյուր Գործադիր Կոմի-
տեյին կից կազմվում են հարկային հանձնաթողով-
ներ, հետևյալ կազմով՝ մի—մի ներկայացուցիչ
Գործկոմից և Ֆինթողկոմի, Հողթողկոմի ու Վի-
ճակագրական Կենտրոնական Վարչութիւն համա-
պատասխան մրմինների, Փոխադարձ ոգնութիւն
գյուղացիական Կոմիտեյի և պրոֆեսիոնալ միու-
թիւնների համապատասխան միութիւն կազմից:

Բանվորա—Գյուղացիական Կառավարութիւնը
հաշվի առնելով այն հանգամանքը, վոր գալատա-
կային (թեմի, դայրայի) հարկային հանձնաթողով-
ները՝ բողոքներն ու միջնորդութիւնները նայե-
լիս, կարող են, սխալմամբ կամ անգիտութեամբ
սխալ վորոշումներ հանել,—իրավունք է տալիս
գյուղացիական բոլոր անտեսութիւններին՝ վո-
րոնք դժգոհ կը մնան գալատակային (թեմի—դայ-
րայի) հարկային հանձնաթողովների վորոշումնե-

րից, բողոքներ տալ գալստական հարկային հանձ-
նաժողովներին, վորոնց վորոշումներն արդեն վերջ-
նական են:

Ց. ԲԵԼԵՆԿԻՑ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039625

(144) 78

A $\frac{I}{4378}$